

ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ԱՐԳԻԼԵՑԻՆ ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐՈՒՄ ՄՕՏԵՆԱԼ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ՆՍՏԱԿԱՅՐ



Ոստիկանական շարքերը կ'արգիլեն ցուցարարներու մուտքը ԲաղրաՄեան փողոց

Ապրիլ 9-ին, Բաֆֆի Յովհաննիսեան բազմազար ժողովուրդի առջև Ազատութեան հրապարակին վրայ տուաւ «Նոր Հայաստանի» երգումը: «Ես՝ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիս, այսօր լուծարում եմ իմ կայերը ներկայ անօրինական իշխանութեան հետ: Յայտարարում եմ, որ չեմ ճանաչում կեղծ դեկավարներին, չեմ հնազանդուելու սուտ օրէնքներին, չեմ հնազանդուելու անիրաւ հրամաններին, ես լիազօրուած եմ իմ իրաւունքով, պաշտպանուած եմ Սահմանադրութեամբ եւ ես չեմ վախենում, եւ ես չեմ վաճառուում, եւ ես չեմ նահանջում: Մենք՝ Հայաստանի չորրորդ հանրապետութեան քաղաքացիներս,

երդուում ենք մեր պապերի երազանքով, մեր երեխաների ապագայով, մեր պետութեան Սահմանադրութեամբ, որ մենք պաշարելու ենք, պաշարելու ենք ամենուր, պաշարելու ենք սիրով, պաշարելու ենք հաւատքով եւ չենք յօգնելու, չենք հիասթափուելու, յոյս ենք տալու իրար, ուժ ենք տալու իրար եւ մենք յաղթելու ենք», - երգում տուին ընտրութիւններու արդիւնքները վիճարկող նախագահի նախկին թեկնածուն եւ անոր համակիրները:

Հաւաքուած բազմութիւնը պարբերաբար կը վանկարկէր «Բաֆֆի, նախագահ» եւ «Սերժ, հեռացիր»:

Շարք էջ 5

Ս.Դ.Յ.Կ.Ի ԵՒ Ռ.Ա.Կ.Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



Ս.Դ.Յ.Կ.-ի եւ Ռ.Ա.Կ.-ի Վարչութեան անդամները

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարչի Մարմնի եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Գալիֆորնիայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները Ապրիլ 8ին, 2013, հանդիպում մը ունեցաւ Փասատինայի Հնչակեան կեդրոնին մէջ:

Սոյն հանդիպման ընթացքին լուսարձակի տակ առնուեցան միջկուսակցական փոխ յարաբերու-

թիւններն ու շրջանային կարգ մը իրավիճակներ: Խորհրդակցութեան նիւթ դարձաւ նաեւ Միջին Արեւելքի քաղաքական անկայուն վիճակն ու մասնաւորաբար՝ սուրիահայ զաղութիւն սատար հանդիսանալու հրամայականը: Ժողովականները կարեւորեցին նաեւ աւանդական կուսակցութիւններու միասնութեան անհրաժեշտութիւնը հայութեան դիմակալող հիմնահարցերուն դիմաց:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԵՐԴՈՒՄ ՏԱԼՈՎ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԴԱՐՁԱՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐ



Սերժ Սարգսեան ելոյթ կ'ունենայ երդման արարողութեան յաջորդած նաշկերոյթի ընթացքին

Երեւանի փողոցներուն վրայ տեղի ունեցող ցուցերու եւ բողոքի ալիքի շուքին տակ երդում տալով, Սերժ Սարգսեան երկրորդ անգամ ըլլալով դարձաւ Հայաստանի նախագահ:

Երեքշաբթի, Ապրիլ 9-ին Երեւանի Կարէն Դեմիրճեանի անուան Մարզահամերգային համալիրին ներս կայացած Ազգային Ժողովի յատուկ նիստի ընթացքին, Սերժ Սարգսեան երկրորդ հնգամեայ ժամկետով ստանձնեց պետութեան ղեկավարի պարտականութիւնները:

Սերժ Սարգսեան, աջը դնելով Սահմանադրութեան մայր օրինակի եւ 7-րդ դարու Վեհաձոր Աւետարանի վրայ, արտասանեց Հայաստանի նախագահի երդումը. «Ստանձնելով Հայաստանի Հանրապետութեան նախագահի պաշտօնը՝ երդում եմ. անվերապահօ-

րէն կատարել Սահմանադրութեան պահանջները, յարգել մարդու ու քաղաքացու իրաւունքներն ու ազատութիւնները, ապահովել Հանրապետութեան անկախութիւնը, տարածքային ամբողջականութիւնը եւ անվտանգութիւնը՝ ի փառս Հայաստանի Հանրապետութեան եւ ի բարօրութիւն Հայաստանի Հանրապետութեան ժողովրդի»:

Նախագահի երդումէն ետք օրհնութեան խօսք ըսաւ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդը:

Այս առթիւ իր ունեցած ելոյթին մէջ Սերժ Սարգսեան շնորհակալութիւն յայտնեց իրեն ձայն տուած ու չտուած քաղաքացիներուն: Ըսաւ, թէ գիտէ, որ այլ թեկնածուներու ձայն տուածները

Շարք էջ 5

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԿԸ ՀԱՅՏԱՐԱՐԷ՝ ՈՒԺԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՉԻ ԿՐՆԱՐ ԼՈՒԾԵԼ ԴԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԸ

Միացեալ Նահանգները՝ որպէս ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի համանախագահ, խորապէս նուիրուած կը մնայ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ լուծման հասնելու նպատակով կողմերու հետ աշխատանքներու շարունակութեան: Ապրիլ 8-ին նման յայտարարութիւն կատարեց Միացեալ Նահանգներու Պետական Բաժանմունքի փոխխօսնակի պաշտօնակատար Փաթրիք Ուենթրել, պատասխանելով ատրպէյճանցի լրագրողի մը հարցին:

Ատրպէյճանի հեռատեսիլի թղթակիցը, յայտնելով թէ վերջերս թուրքիա կատարած այցի ընթացքին Միացեալ Նահանգներու պետական քարտուղար ձոն Բերրի, թուրք պաշտօնակից Ահմէթ Դաւութօղլուի հետ քննարկած է Լեւոնային Ղարաբաղի տագնապը, հարցուց խաղաղ բանակցութիւնները իրականելու եւ «Ատր-

պէյճանի տարածքներու գրաւման» մասին:

Ի պատասխան՝ Պետական Բաժանմունքի ներկայացուցիչը նաեւ ըսաւ. - «Մենք կը հաւատանք, որ ուժի կիրառումը չի կրնար լուծել հակամարտութիւնը, եւ կոչ կ'ընենք բոլոր կողմերուն՝ ձեռնպահ մնալու ուժի կիրառումէն կամ ուժի կիրառման սպառնալիքներէն: Սակայն ես աւելի շատ տեղեկատուութիւն չունիմ, թէ որ համաթեքստի մէջ այն Ղարաբաղի հարցը կրնար շոշափուած ըլլալ թուրքիոյ մէջ պետական քարտուղարի դիւանագիտութեան շրջագիծէն ներս»:

Հայ - թրքական յարաբերութիւններու լուծման ուղղութեամբ զարգացումներու առկայութեան մասին հարցին եւս Ուենթրել արձագանքած է, թէ տուեալ թեման

Շարք էջ 4

ԵՒ ՓԱՌՔ ՐԱՖՖՈՒ «ԶՕՐԱՎԱՐԻՆ»

ԷԴԻՏԱԿԱՆԹԵՆԱՆ

Երէկ հանրահաւաքներու յետոյ «բարեւալայնացումը» փաստացի ղեկավարեց ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանը, եւ պէտք է խոստովանել, որ եթէ չլինէր «գորավարը», որը ոչ մի ընդհանրացում չէր ունենար, ապա Աստուած գիտէ, թէ ինչ գարգացումներ կարող էին լինել Բաղրամեան պողոտայում:

Դեռ Բաղրամեան մեկնարկից առաջ իսկ ընդհանրացումը, նրա ելույթի անբովանդակ մտքերից ու ճշմարտութեան բառակցարարից՝ պարզ էր, որ Բաղրամեան չգիտի իր անելիքը: Նա նախ «պատմութեան կերտման» նոր փուլ նշանակեց երեկոյեան ժամը վեցը, ապա տեսնելով բազմահազարանոց հրապարակի դժգոհութիւնը՝ ստիպուած երթ անցկացրեց դէպի Միասնականի արձանի տարածք:

Արդէն երեկոյեան մեկնարկած հանրահաւաքը Ազատութեան հրապարակում, որին դարձեալ բաւական մարդ էր հաւաքուել՝ Բաղրամեան շրջանակում յայտարարեց, որ գնում են Բաղրամեան 26, որովհետեւ այն պատկանում է ժողովրդին, սակայն քիչ անց, փաստօրէն, յայտնաբերելով, որ Բաղրամեան պողոտան փակ է, անմիջապէս փոխեց ծրագիրը, թէ՛ «գնում ենք Ծիծեռնակաբերդ»:

Դեռ ոչինչ, որ «յաղթանակած», «ընտրեալ» նախագահը նոր Հայաստանի երդմանակալութիւնից յետոյ որեւէ անելիք չուներ, քան մէկ օրուայ ընթացքում քաղաքի մէջ մի քանի շրջապտոյտներ իրականացնելը... Պարզուած է, որ նոյնիսկ այդ երթերը կազմակերպելու տարրական կարողութիւն էլ չկայ...

Ամէն ինչ սկսուեց Բաղրամեան պողոտայից: Հանդիպելով ոստիկանական զօրքերին, որոնք պաշտպանուած փակել էին պողոտան, Բաղրամեան ցոյց տուեց քաղաքական գործչին, կուսակցութեան առաջնորդին, էլ չենք ասում՝ «ընտրեալ նախագահին» ոչ վայել կեցուածք: Մի պահ իրավիճակը բաւական թէժացաւ, եւ եթէ լարումը մի փոքր էլ երկարեր, հաւանաբար, անվերահսկելի ու անկախատեսելի իրավիճակը անդառնալի հետեւանքների կը հանգեցնէր:

Այդ պայթիւնավտանգ իրավիճակում յանկարծ պարզուեց, որ Բաղրամեան ընտանիքի անդամների հետ «գորավարի» հետ «քննարկումները մէջ է»: Իսկ քիչ անց պարզուեց, որ Բաղրամեան Յովհաննիսեանը ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանի ուղեկցութեամբ բարձր տրամադրութեամբ Մոսկովեան-Սարեան-փողոցով շարժուած են: Ապա պարզուեց, որ «Մետրոպոլի» մօտ Բաղրամեան Յովհաննիսեանը ժողովրդին յայտնել է, թէ՛ «խաղաղ, հանգիստ գնում ենք դէպի Ծիծեռնակաբերդ»:

Մինչ այդ, Բաղրամեան պողոտայում մնացած հազարաւոր ցուցարարները՝ անընդհատ թէժացող միջնորդութեամբ ու անորոշութեան մէջ՝ պատկերացում չունէին, թէ ինչ է կատարուում, որտեղ է Բաղրամեան եւ ինչ պէտք է անել: Սակայն իրավիճակից օգտուողներ էլ գտնեցին... Հացադուլով, բաց աւելի հեռահար նպատակներով քաղաքական ասպարէզում յայտնուած՝ Անդրիաս Ղուկասեանը յանկարծ յայտարարեց, թէ ով կա-

րեւորում է Բաղրամեան պողոտայում տեղի ունեցողը՝ կարող է մնալ նստացոյցի: Նա նշեց, որ եթէ ոստիկանութիւնը սկսի գործողութիւններ, ապա բոլորը՝ «կարող են դիմադրել, բայց առանց ուժ գործադրելու»: «Ով որ կարող է՝ մնում է, ով չի կարող՝ գնում է: Այստեղ մնում են միայն այն մարդիկ, ովքեր կարող են առանց ուժ գործադրելու», - ասաց նա: Ահա, այսպիսի թափանցիկ ակնարկներ:

Քիչ անց, իհարկէ, նա էլ անհետացաւ, չետոյ պարզուեց՝ բերման է ենթարկուել, եւ փառք «գորավարին», որ սոյն երիտասարդի յաւակնութիւններով արիւնահեղութիւն չեղաւ Բաղրամեան փողոցում: Բաց մնաց մէկ անպատասխան հարց, արդեօ՞ք Անդրիասին յաջողուել էր՝ «դիմադրել, բայց առանց ուժ գործադրելու»...

Դե իսկ, երբ ժողովուրդը մահակաւոր ոստիկաններին դէմ առ դէմ կանգնած էր՝ տեսարանը յուզիչ էր Ծիծեռնակաբերդում... «Զօրավարը» աղօթեց «ընտրեալ» նախագահի համար: Աղօթեց, եւ ամէն ինչ խաղաղ անցաւ՝ բացուեցին փակ փողոցները, կատարուեցին «գորավարի» բոլոր հրահանգները:

Ինչեւէ, ուշ երեկոյեան, Բաղրամեան պողոտայի սկզբնամասում հաւաքուածները, երբ Բաղրամեան Յովհաննիսեանի հետ միասին սպասում էին, որպէսզի ոստիկանութիւնը բացեր Բաղրամեան պողոտան եւ կարողանային մայրով երթ անցկացնել, մինչ ոստիկանները կը բացէին փողոցը՝ քաղաքացիները մի քանի ուշագրաւ հարց ուղղեցին Բաղրամեան Յովհաննիսեանին: «Միւս անգամ հաւաքուած ենք, որ ինչ անենք», «Մուկն ու կատու է՞ք խաղում»...

Ձեռքով բարեւելը, ոտքով կիրովմետրանոց քայլքը, իսկ ծայրայեղ դէպքում՝ ծոմը քաղաքական գործունէութեան հետ ընդհանրապէս ի՞նչ կապ ունեն... Ուրբաթ օրը ժողովրդին կոչ եւ անում Ազատութեան հրապարակում հաւաքուել՝ որ ի՞նչ անես...

Մեղք չի՞ «գորավարը»...
«ՀԱՅԵԼԻ»

ՄՈՍԿՈՒԱՆ ԶԳՏՈՒՄ Է ԶՕՐՔ ՄՏՑՆԵԼ ՂԱՐԱԲԱՂ

ՆԱԽՐԱՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Ղարաբաղեան հակամարտութեան գօտում ուժերի հաւասարակշռութիւնը կտրուկ փոխուել է, եւ դա կարող է հանգեցնել ռազմաքաղաքական հաւասարակշռութեան խախտման: Ռուսաստանի ու Ատրպէյճանի միջեւ աւարտուել է Գաբալայի ՌՏԿ-ի ընդունում-յանձնումը: Իսկ օրերս տեղեկութիւն է յայտնուել, որ Ատրպէյճանը դադարել է գէնք գնել Ռուսաստանից:

Մինչ այժմ հակամարտութեան գօտում հաւասարակշռութիւնը որոշակիօրէն պահպանուած էր այն բանի շնորհիւ, որ Ռուսաստանը Հայաստանին պաշտպանական սպառազինութիւն էր մատակարարում, իսկ Ատրպէյճանին՝ յարձակողական: Ընդ որում, կողմերից ոչ մէկին էլ կիրառման տեխնոլոգիաները չէին փոխանցուում, եւ դրանց վրայ աշխատում էին ռուս զինուորականները:

Այժմ, երբ Ատրպէյճանը գէնք է գնում այլ երկրներից, եւ յատկապէս Իսրայէլից, ռազմաքաղաքական հաւասարակշռութեան ռուսական տարրը համահարթուել է: Այժմ Ռուսաստանը պէտք է կամ ուժեղացնի ներկայութիւնը Հայաստանում ու պաշտօնապէս դառնայ Հայաստանի ու Ղարաբաղի անվտանգութեան երաշխաւորը, կամ էլ Միւսկի խմբի համանախագահներ ԱՄՆ ու Ֆրանսայի հետ համատեղ ստիպի Ատրպէյճանին չյարձակման պակտ ստորագրել:

Ամենայն հաւանականութեամբ, Ռուսաստանը կ'ընտրի առաջին տարբերակը եւ կ'անի ամէն ինչ, որպէսզի ռուսական զօրքերը, հաւանաբար ՀԱՊԿ շրջանակում, յայտնուեն Ղարաբաղում: Յայտնի չէ, թէ ինչ առիթով կ'արուի դա: Սկզբում, թերեւս, ենթադրուած է Ստեփանակերտի օդանաւակայանի գործարկման տարբերակը ու ՀԱՊԿ զօրքերի կողմից դրա պաշտպանութիւնը: Սակայն չի բացառուում, որ դիտարկուած է սահմանին սադրանքի տարբերակը: Այդ համատեքստում տեղեկութիւններ են հնչում Հայաստանի հետ սահմանին Ատրպէյճանի զօրքերի ու տեխնիկայի կուտակման

մասին: Հնարաւոր է, հենց դրա հետ է կապուած Իրանի ԱԳՆ յատուկ ներկայացուցիչ Մեհմանփարաստի այցը Հայաստան: Նրա այցի գլխաւոր ուղերձը վերաբերում է Ղարաբաղեան հակամարտութիւնը խաղաղ ճանապարհով լուծելուն: Այլ կերպ ասած, Իրանը չի ցանկանում Ղարաբաղում, որի հետ 100 կմ-ից աւելի սահման ունի, օտար զօրքեր տեսնել՝ ռուսական, ՆԱՏՕ-ական կամ թուրքական:

Արեւմտեան վերլուծաբանները կանխատեսում են, որ 2014 թուականին Ղարաբաղում կը վերսկսուի ռազմական հակամարտութիւնը, այսինքն, Ատրպէյճանում աշանը տեղի ունենալիք նախագահական ընտրութիւններից յետոյ: Ռուսները խօսում են աւելի մօտ ժամկէտների մասին: Տեղեկատուութեան հարցերով Դուբայի յանձնաժողովի նախագահ Ալեքսեյ Միտրոֆանովը, օրինակ, վստահ է, որ պատերազմ է սպասում: Հնարաւոր է, նա գիտի, որ Ռուսաստանը մտադիր է շուտով յայտնուել Ղարաբաղում:

Ապրիլի 25-26-ին Մոսկուա է հրաւիրուել Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդեանը: Հնարաւոր է, հանդիպմանը կը քննարկի Ղարաբաղում ռուսական զօրքերի հարցը: Ձի բացառուում, որ Մոսկուան կը փորձի համոզել Հայաստանին, որ եթէ ռուսական զօրքերը Ղարաբաղում յայտնուեն, Ատրպէյճանն ու թուրքիան չեն համարձակուի պատերազմ սկսել:

Այդ ֆոնին, յատկանշական յօդուած է տպագրուել Նիւ Եորք Թայմզում, որում նշուած է, որ ԱՄՆ նոր պետքարտուղար Ջոն Քերրին պէտք է շտապ զբաղուի դարաբաղեան խնդրով: Քերրին մտադիր է այս հանգամանակ օրերին այցելել թուրքիա, միզոցէ ճանապարհին Հայաստան էլ մտնի:

«ԼՐԱԳԻՐ»

ՈՍՏԻԿԱՆԻ ՄԱՅԱԿԻ ՆԵՐՔՈՅ

ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՆԵԱՆ

Երէկ օրուայ «հերոսը» կրկին ոստիկաններն էին, ովքեր պարբերաբար մեր երկրում գլխաւոր գործող անձինք են դառնում եւ ուղղորդում քաղաքական պրոցէսները: Եւ դա արուած է այնպէս, կարծես հենց դա է մեր ոստիկանների գլխաւոր պարտականութիւնը, այլ ոչ թէ երկրում հասարակական կարգի պահպանութիւնը, յանցագործութիւնների դէմ պայքարն ու կանխարգելումը: Այս էլ որեւորդ տարին է, որ մեր երկրում նախագահների երդմանակալութեան արարողութիւնն ընթանում է ոստիկանական մահակի ներքոյ եւ ջալկցութեամբ: Երէկ ողջ օրը մայրաքաղաքում լսուած էին ոստիկանական շչակների ձայները, բարձրաստիճան ոստիկանները հարցազրոյցներ էին տալիս, ցածրաստիճանները՝ սպառնալիքներ հնչեցնում: Օրն առանց պատասխանների չանցաւ՝ կրկին բախումներ եղան, ծեծուածներ, նուաստացուածներ: Հենց այս միջադէպերն են պատճառը, որ շատերն ասում են, թէ ապրում ենք ոստի-

կանական երկրում, որտեղ թելադրողը ոչ թէ օրէնքն է ու Սահմանադրութիւնը, այլ ոստիկանները, բանակը, ուժը, բռնութիւնը: Եթէ ընտրական իրաւունքը չի գործում, պէտք է գործի ընտրուողների կամքը՝ սա է կեանքի օրէնքը: Ինչպէս անել, որ գործեն օրէնքները, եւ պատժուեն օրէնքը խախտողները, ահա այն գերնպատակը, որին պէտք է հասնի մեր հասարակութիւնը: Ինչպէս անել, որ մարդկանց փոքրաթիւ խումբը չթելադրի իր կամքը, եւ յաղթի մեծամասնութեան կամքը: Ահա այն գոյավիճակը, որին ձգտում են աշխարհի բոլոր ժողովուրդները: Որ չստացուի այնպէս, ինչպէս հիմա Հայաստանում է՝ երբ գէնքի ու ոստիկանութեան ուժին տիրապետող իշխանութիւնն իրաւացի է, իսկ ժողովրդի ջալկցութիւնն ունեցող ընդդիմութիւնը՝ դատապարտուած: Որ իշխանութիւնը կարգուկանոն հաստատելու անուան տակ բռնութիւններ չկիրառի, իսկ ընդդիմութիւնն անապացոյց յայտարարութիւններ չանի, թէ ընտրութիւնները կեղծուել են: «ՀՐԱՊԱՐԱԿ»

ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ

ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
 MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍԱՆ

«ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻՆ ՓՈՐՁՆ ԷՐ ՊԱԿԱՍ», - ԼԱՐԻՍԱ ԱԼԱՎԵՐԴԵԱՆ

Պէտք է դասեր քաղել նրանից, ինչ տեղի ունեցաւ Ապրիլ 9-ի երեկոյեան Բաղրամեան պողոտայում Բաֆֆի Յովհաննիսեանի, նրա համակիրների եւ ուստիկանների միջեւ: Այսպէս է կարծում «Ժառանգութեան» նախկին պատգամաւոր Լարիսա Ալավերդեանը:



«Ժառանգութեան» նախկին անդամ Լարիսա Ալավերդեան

«Ես կարծում եմ, որ եթէ Բաֆֆի Յովհաննիսեանը ուղղութիւնը փոխել էր, ապա տարօրինակ էր, որ ժողովրդի միւս մասը մնաց Բաղրամեան փողոցում: Կարծում եմ՝ որոշակի անկազմակերպւածութիւն կար: Բացի այդ կան տարբեր խմբեր, որոնք յաւակնում են լիզերութեան», - կարծում է Լարիսա Ալավերդեանը:

Նա ասում է՝ նման բողոքի ակցիաները պէտք է նախապէս կազմակերպել, եւ որոշակի խումբ պէտք է լաւ իրազեկուած լինի, թէ ինչ են պատրաստուում անել: «Այդ նոյն վայրում, այդ վիճակում նոյն նախաձեռնութիւններով հանդէս գալը առնուազն անկառավարելիութեան վտանգներ է իր մէջ պարունակում», - վստահ է Լարիսա Ալավերդեանը:

Լարիսա Ալավերդեանը երէկուակ միջադէպից յետոյ եզրակացնում է՝ Բաֆֆի Յովհաննիսեանին փորձն էր պակաս՝ բազմութեանը

կառավարելու. «Պէտք է նկատի ունենալ, որ կարող են յայտնուել եւ՝ առանձին նախաձեռնողներ, եւ՝ սաղրիչներ, կարող է լինել նաեւ քո հակառակորդը: Դա պէտք էր անպայման հաշուի առնուէր»:

Լարիսա Ալավերդեանը միայն ուրախ է, որ իրականացել են իր կանխատեսումները. այն է՝ 2008թ. Մարտի մէկի դէպքերի կրկնութիւնը բացառելու վերաբերեալ:

Ինչ վերաբերում է Արմէն Մարտիրոսեանի հետ տեղի ունեցած միջադէպին՝ տիկին Ալավերդեանը ասաց, որ փաստաբան Սեդրա Սաֆարեանը Արմէն Մարտիրոսեանի հետ տեղի ունեցածի համար իրական գործ է սկսել: «Փաստաբանը արդէն յայտարարութիւն է կազմել յանցագործութեան մասին, որովհետեւ զգալի ֆիզիկական վնաս է հասցուել Արմէն Մարտիրոսեանին», - ասաց «Ժառանգութեան» նախկին անդամը:

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ՈՒԺԵՐԸ ՄԵՆԱԿ ԹՈՂԵԼ ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻՆ

Հայաստանում ներքաղաքական իրավիճակը կարելի է բնութագրել աւելի շատ կայուն, քան՝ անկայուն, սակայն միանշանակ է, որ երկրում կայ հասարակութեան շերտ, որն իր անհամաձայնութիւնն է յայտնում նախագահի ընտրութիւնների արդիւնքների վերաբերեալ: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում նշեց ԱՊՀ երկրների ինստիտուտի հայկական մասնաճիւղի տնօրէն, քաղաքագէտ Ալեքսանդր Մարկարովը՝ մեկնաբանելով Հայաստանում ստեղծուած ներքաղաքական իրավիճակը:



Քաղաքագէտ Ալեքսանդր Մարկարով

«Հարցն այն է, թէ ինչ է իրենից ներկայացնում եւ ներկայացնելու ընդդիմութիւնը եւ ինչպէս է իրեն պահելու առաջիկայ ամիսներին՝ հաշուի առնելով իր բազմաշերտութիւնը: Մի կողմից կայ քաղաքական գործիչ, ով ընդդիմութեան այլ ներկայացուցիչների, ինչպէս նաեւ ընտրագանգուածի մի մեծ հատուածի կամքով հանդէս է գալիս ընդդիմութեան նոր ծանրութեան կենտրոնի դերում: Բայց դա ներկայումս ամբողջական ջակցութիւն չի գտնում այդ թւում նաեւ այն ընտրագանգուածի մօտ, ով իր ձայնը տուել է Բաֆֆի Յովհաննիսեանի օգտին: Այդ տեսանկիւնից նախագահական ընտրութիւններում ստացուած ձայների կապիտալիզացիայի խնդիր կայ», - ասաց Մարկարովը: Նրա խօսքով՝ երկրում զգալի ներքաղաքական խնդիրները չեն սպասուում, թէեւ գոյութիւն ունի ակտիւ քաղաքացիների մի զգալի հատուած, ովքեր տարբեր գործողութիւններ են իրականացնում Շարփի «Բռնապետութիւնից ժողովրդավարութիւն» գրքոյկի հա-

մաձայն, որտեղ պայքարի տարբեր մեթոտներ են առաջարկուում՝ հացադուլ, դասադուլ եւ այլն:

Հարցին, թէ ինչու այլ ընդդիմադիր ուժեր, ովքեր եւս չեն մասնակցել Սերժ Սարգսեանի երդմնակալութեան արարողութեանը, չեն միացել Ապրիլի 9-ին, Բաֆֆի Յովհաննիսեանի կազմակերպած ակցիաներին, Մարկարովը չբացատրեց նրանց եւ Բաֆֆի Յովհաննիսեանի միջեւ տարաձայնութիւնների առկայութիւնը: «Նաեւ բացառուած է, որ նրանք չեն հաւատում «Ժառանգութեան» առաջնորդի՝ նպատակներին հասնելու հնարաւորութեանը: ՀԱԿ-ի մեծ մասը Յովհաննիսեանի պայքարը դիտում է որպէս նրա անձնական պայքարը, ՀՅԴ-ն այդ պայքարը դիտում է այլ տեսանկիւնից՝ խօսելով երկրում առկայ խնդիրներից եւ դրանք լուծելու անհրաժեշտութիւնից», - ասաց նա, յաւելելով, որ շատերը կը ցանկանային օգտուել «յեղափոխութեան» պտուղներից, սակայն հասկանում են, որ «պտուղներ» չեն լինելու:

«ԱՆՅԱՊԱՂ ՊԵՏՔ Է ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ՀՅԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՅԸ».- Վ. ՕՍԿԱՆԵԱՆ

Հայաստանի ԱԳ նախկին նախարար, Երեւանի աւագանու ընտրութիւններում ԲՀԿ ցուցակը գլխաւորող Վարդան Օսկանեանն Ապրիլի 10-ին, հանդիպում է ունեցել Նոր Նորքի բնակիչների հետ Նանսենի այգում: Նա իր կուսակիցների ուղեկցութեամբ զբօսնել է այգում, զրուցել բնակիչների հետ, հետաքրքրուել նրանց խնդիրներով, կոչ արել ծանօթանալ ԲՀԿ-ի ծրագրին եւ առաջիկայ ընտրութիւններում քուէարկել ԲՀԿ-ի օգտին:

Բնակիչները հիմնականում բողոքել են կենցաղային խնդիրներից, աշխատատեղերի բացակայութիւնից, այգու անբարեկարգ վիճակից: Մի կին ուշադրութիւն է հրաւիրել նրա վրայ, որ մանկական հրապարակում տեղադրուած մետաղեայ կարուսէլները կարող են վտանգ ներկայացնել երեխաների համար:

Օսկանեանն անդրադառնա-

լով մտքին, թէ «մէկ է, ոչինչ չի փոխուելու», ներկայացրել է նման յուսահատութեան պատճառները: Նրա համոզմամբ, պատճառներից մէկն այն է, որ ԲՀԿ-ն չմասնակցեց նախագահական ընտրութիւններին: Այդ որոշումը Օսկանեանը բացատրեց նրանով, որ ԲՀԿ-ի ղեկավարութիւնը յոյս ունէր, որ հնարաւոր կը լինի ոչ իշխանական ուժերի համախմբուած թիմով մասնակցել ընտրութիւններին, բայց դա չստացուեց: Թէեւ ԲՀԿ-ն կարող էր ընտրութիւնների գնալ միայնակ, այդուհանդերձ նման քայլի չզնայ: Երկրորդ պատճառը, նրա խօսքով, իշխանութեան ներսում ՀՀԿ-ի մենաշնորհն է: «Անյապաղ պէտք է դադարեցնել ՀՀԿ-ի քաղաքական մենաշնորհը», - ասաց Օսկանեանն ու յաւելեց, որ հենց դրան է ուղղուած իրենց մասնակցութիւնն ու յղթանակի ձգտումը Երեւանի աւագանու ընտրութիւններում:

«ՈՐԵՒ ԸՆԿԱՌԱՎԱՐԵԼԻ ԲԱՆ ՏԵՂԻ ԶԻ ՈՒՆԵՑԵԼ».- ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆ

Ապրիլի 9-ին որեւէ անկառավարելի բան տեղի չի ունեցել եւ անպատասխանատուութեան դրսեւորում չի եղել: Այդ մասին Ապրիլի 10-ին, լրագրողների հետ ճեպագրոյցում ասաց պատգամաւոր, ՀԱԿ խմբակցութեան անդամ Նիկոլ Փաշինեանը՝ մեկնաբանելով ընդդիմութեան գործողութիւնները:

Նրա խօսքով՝ իրադարձութիւնների սկզբից մինչեւ վերջ գտնուել է իրադարձութիւնների թատերաբեմում: «Ես եղել եմ Բաղրամեան պողոտայում: Ես իմ ներկայութեամբ արձանագրել եմ, որ ինձ համար Սերժ Սարգսեան անունով նախագահ չի եղել, չկայ եւ չի լինի, եւ ես ուրախ եմ, որ Ապրիլի 9-ին եղել է լեփ-լեցուն Ազատութեան հրապարակ: Դա նշանակում է, որ ՀՀ քաղաքացիներն ունեն բաւարար կամք իրենց սահմանադրական իրաւունքները վերականգնելու համար», - ասաց Ն. Փաշինեանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ



ՀՀ կառավարութեան հրաժարականի արարողութիւնը նախագահական պալատէն ներս

Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան պահանջով, կառավարութիւնն Ապրիլի 9-ին հրաժարական ներկայացրեց:

Նախագահի երդմնակալութեան արարողութիւնից յետոյ գործադիրն ամբողջ կազմով՝ վարչապետ Տիգրան Սարգսեանի գլխաւորութեամբ, այցելել էր նախագահական նստավայր: Տիգրան Սարգսեանը շնորհաւորեց Սերժ Սարգսեանին Հայաստանի նախագահի պաշտօնը երկրորդ անգամ ստանձնելու կապակցութեամբ:

Այնուհետեւ Տիգրան Սարգսեանը ընթերցեց կառավարութեան հրաժարականի դիմումը: Ընդունելով գործադիրի հրաժարականը՝ Սերժ Սարգսեանը շնորհակալութիւն յայտնեց կառավարութեան անդամներին համատեղ աշխատանքի համար:

Կառավարութեան կազմի եւ վարչապետի հնարաւոր փոփոխութեան մասին «Ազատութիւն»

ուղիտկայանը զրուցել է իշխող Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբեանի հետ:

«Բնականաբար, նախագահն ինքը կ'առաջարկի վարչապետին, մենք չենք քննարկել այդ հարցը, բայց կը քննարկուի», - ասաց Զոհրաբեանը՝ յաւելելով, թէ չի կարող ասել վարչապետի փոփոխութիւն կը լինի, թէ՛ ոչ. - «Փոփոխութիւններ կը լինեն, միգուցէ այն չափով չէ, ինչ չափով որ մամուլում տարածուած է: Այս կառավարութիւնը վատ չի աշխատել, չեմ կարծում, որ արմատական փոփոխութիւններ կը լինեն»:

Հրաժարական ներկայացրած կառավարութիւնը ձեւաւորուել էր 2012 թուականի խորհրդարանական ընտրութիւններից յետոյ: 18 նախարարութիւններից 14-ը գլխաւորում են իշխող Հանրապետական կուսակցութեան անդամներ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ԿԱՐՖՈՒՐ»-Ի ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՐՑՆ ԱՌԱՅԺՄ ԱՆՈՐՈՇ Է

Առայժմ անյայտ է՝ ֆրանսիական «Կարֆուր» խանութների ցանցը Հայաստանում կը ծառայի՞ գործունեություն, թե՞ ոչ: Թե՛ եւ պաշտօնեաները վստահեցնում են, որ ո՛չ տեղական տնտեսավարողները, ո՛չ Հայաստանի օրէնքները չեն խանգարում «Կարֆուր» մուտքին, մամուլը շարունակում է պնդել, որ ֆրանսիական ընկերությունները խոչընդոտում են Հայաստանը առաջին անհրաժեշտությունների ցանցին և պատկանում:



Ֆրանսիական «Կարֆուր» խանութներու ցանցի Հայաստան մուտքը դժուարութիւններու առջեւ

Ինքն անգամ ոչ պաշտօնական քննարկման է հրաւիրել ընկերությունների անդամներին՝ այդ հրաւերին էլ չեն արձագանքել:

«Այն դէպքում, երբ մի քանի այլ սուպերմարկետների շարքում Մամուլէլ Ալեքսանեանի «Երեւան Սիթի» եւ գերիշխող դիրք ունեցող է ճանաչուել, յանձնաժողովն արդեօք չէ՞ր կարող առանց «Կարֆուր» հարցը քննարկման առարկայ դարձնել», - «Ազատութիւն» ռադիոկայանի այս հարցին Շաբոնեանը պատասխանեց. - «Մենք չենք կարող վերացական եւ ընդհանուր յայտարարութիւններ հիմք ընդունել մեր որոշումների համար: Չէ՞ որ, ի վերջոյ, մենք, եթէ ինչի որ կայ, պէտք է որոշում կայացնենք եւ մեր որոշման համար կոնկրետ փաստեր եւ հիմքեր են պէտք: Մեր ռեսուրսները մենք պէտք է արդիւնաւէտ ծախսենք, այսինքն՝ պէտք է իմանանք, թէ ինչ ինչի ենք ուզում բացայայտել: Մեր մրցակցութեան օրէնսդրութիւնը շատ լայն է, այսինքն, մենք պէտք է իմանանք խօսքը ի՞նչ ինչի մասին է՝ կայ ինչ-որ համարձակցային համաձայնութիւն, թէ՞ ինչ-որ գերիշխող դիրքի չափազանցում, թէ՞ անբարեխիղճ մրցակցութիւն»:

Խնդիրն այնքան մեծ հնչեղութիւն է ստացել, որ սկսել է անգամ արտասահմանից դիւանագետներին հետաքրքրել: Մասնաւորապէս, Հայաստանում Միացեալ Նահանգների դեսպան Ջոն Հեֆերնը նոյնպէս անդադարձել է Երեւանում «Կարֆուր» բացման թեմային՝ երկու անգամ, եւ նշել, որ ինքը կ'ուզէր Երեւանում «Կարֆուր» տեսնել:

Տնտեսական մրցակցութեան պաշտպանութեան պետական յանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոնեանը խորհրդարանում յայտարարեց, թէ իրենք ուզում են պարզել՝ ի՞նչ ինչի ենք ունի «Կարֆուր» Հայաստանում, սակայն ֆրանսիական ընկերությունները կայացուցիչները ձեռնպահ են մնում իրենց յանձնաժողովի հետ քննարկել հարցը: Շաբոնեանի խօսքով,

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցը պարզեցնելու համար, երբ մենք մի պետություն կազմում էինք, անգամ տարածքային խնդիրները ցանկութիւնների, ոչ թէ ռազմական գործողութիւնների բնոյթ էին կրում: Հայաստանում կարծում էին,

ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ ՀԵՏԱՔՆՆՈՒԹԻՒՆ Է ՍԿՍՈՒԵԼ «ԱԿՕՍ»-Ի ԽՄԲԱԳՐԻ ԵՒ ԳՐՈՂԻ ԴԵՍ

Թուրքիայի դատախազութիւնը հետաքննութիւն է սկսել հայկական «Ակօս» թերթի գլխավոր խմբագիր Ռոբերտ Քոփթաշի եւ գրող Ումիթ Կիվանչիի դէմ՝ թուրքերի ինքնութիւնը վիրաւորելու մեղադրանքով, որը ներկայացրել է Անթաթիայի մի բնակիչ:



«Ակօս» թերթի գլխաւոր խմբագիր Ռոբերտ Քոփթաշ

Այդին թաշին 2012 թուականի Մայիսին դատախազութեանը արդէն ցուցմունքներ է տուել: Հայցուողը պնդում է, որ Հրանդ Դինքի սպանութեան գործով դատավճռից անմիջապէս յետոյ հեռուստատեսային մի հաղորդման ընթացքում Քոփթաշը եւ Կիվանչին վիրաւորել են թուրքերի ինքնութիւնը՝ Դինքի սպանութեան համար մեղադրելով պետությունը:

«Ակօս» թերթի գլխաւոր խմբագիր Ռոբերտ Քոփթաշը եւ Կիվանչին են հրաւիրուել նաեւ Քոփթաշը եւ Կիվանչին:

«Որպէս թուրքիայի քաղաքացի՝ ես ցանկանում եմ նշել, որ չեմ ընդունում նրանց խօսքերը, թէ թուրքիա պետութիւնն է մարդասպանը, որ այն շարունակում է սպանութիւնները, ինչպէս նաեւ անընդունելի են դատաւարութեան ընթացքում նրանց արած արտայայտութիւնները», - դատախազութեանը գրել է թաշին:

Միաժամանակ, թուրքական թերթը նշում է, որ նոր օրէնքի համաձայն՝ թուրքերի ինքնութիւնը վիրաւորելու 301-րդ յօդուածով ցանկացած գործ յարուցելու համար դատախազութիւնը պարտաւոր է թոյլտուութիւն ստանալ արդարադատութեան նախարարութիւնից: Նախարարութիւնից «Ռատիքալ»-ին ասել են, որ Քոփթաշի եւ Կիվանչիի դէմ գործ յարուցելու համար ոչ մի դիմում չեն ստացել:

Այս մասին տեղեկացնում է «Ռատիքալ» թերթը, նշելով, որ իր աղբիւրների համաձայն՝ դատախազութիւնը հիմա ապացուցներ հաւաքելու փուլում է, եւ անցած շաբաթ դատախազութիւն

Քոփթաշի եւ Կիվանչիի փաստաբանը ասել է, որ այդ բողոքը չպէտք է քննարկուի, չպէտք է ուշադրութեան արժանանայ: Քոփթաշն ու Կիվանչին արտայայտել են իրենց կարծիքները, ընդգծել է փաստաբանը:

ԱՋԵՐԻ ԳՐՈՂ ԻՐԱՅԻՄԲԵԿՈՎ. «ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄԵՁ ԹՇՆԱՄԻ ՉԷ»

Ադրբեջանցի հանրայայտ գրող, սցենարիստ Ռուստամ Իբրահիմբեկովն այդ երկրի արդի գրականութեան արդէն երկրորդ անուանի ներկայացուցիչն է Աքրամ Այլիսլիից յետոյ, ում յայտարարութիւններն էապէս տարբերում են ադրբեջանական քարոզչութեան ասանդակային դարձած կաղապարներից:



Ազերի գրող Ռուստամ Իբրահիմբեկով

ԱՊՀ կինոգործիչների կոնֆերանցիայի եւ Ադրբեջանի կինոգործիչների միութեան նախագահ, Եւրոպայի եւ ԱՄՆ-ի կինոակադեմիաների անդամ Իբրահիմբեկովը «Ռոսբալտ» ինֆորմացիոն գործակալութեան հետ հարցազրոյցում ասել է. - «Ես վստահ եմ, որ հայ ժողովուրդը մեզ թշնամի չէ: Նրանք էլ մեզ պէս ողբերգութեան գոհ են դարձել»:

որ Ղարաբաղն իրենց հողն է, մենք էլ կարծում ենք, որ դա մեր հողն է: Սա քննարկումների, բանակցութիւնների եւ գիտական ուսումնասիրութիւնների թեմա է: Իմ կարծիքով, հակամարտութեան լուծումը ռազմական ճանապարհով յանցագործութիւն է երկու երկրների բնակչութեան եւ ընդհանրապէս մարդկութեան հանդէպ»:

«Ադրբեջանն ուզում է վերադարձնել Լեռնային Ղարաբաղը, բայց դա միայն հող չէ, դա նաեւ բնակչութիւն է՝ մեծամասամբ հայկական: Մենք կարծում ենք, Լեռնային Ղարաբաղում երբեք է պարտաւոր կամ պարտաւոր մարդիկ Ադրբեջանի քաղաքացիներ են: Նշանակում է՝ նրանք էլ նոյն իրաւունքներն ունեն, ինչ Ադրբեջանի միւս հատուածը: Ինչպէ՞ս կարելի է նրանց այլ որակի մարդ համարել: Շատ սխալ եմ համարում նրանց հանդէպ թշնամութեան սերմանումը: Եթէ հիմա մարդկային յարաբերութիւններ չհաստատենք ապագայի համար, յետոյ բացթողումները շտկել անհնար կը լինի»:

Ադրբեջանցի ճանաչուած գրողը վստահ է, որ հակամարտութիւնը պէտք է լուծել երկու ժողովուրդների փոխյարաբերութիւնները կարգաւորելու ճանապարհով. - «Դա է ամենաբարդը: 21-րդ դարում հարցերի լուծման ցանկացած բռնի մեթոտ ուղղակի անընդունելի է: Հիմա ամբողջ աշխարհն այս կամ այն կերպ ներգրաւուած է Ղարաբաղի հարցի լուծման մէջ: Երկու պետութիւնների հասարակութիւններն էլ դժգոհ են առկայ իրավիճակից: Դա ռազմական գործողութիւնների վերսկսման վտանգ է առաջացնում, որովհետեւ խաղաղ բանակցութիւնները շօշափելի արդիւնքներ չեն գրանցել՝ չնայած գործընթացի մասնակիցների ջանքերին: Շատ կարեւոր է հասարակական դիւանագիտութեան դերը: Հասարակ մարդկանց միջեւ պէտք է համաձայնութիւն լինի: Պաշտօնական քարոզչութիւնը երկու կողմերից էլ մարդկանց միմեանց դէմ է տրամադրում: Դա ամենասարսափելին է: Ինչ-որ ժամանակ յետոյ պետութիւնները հաշտուում են, կառավարութիւնները համաձայնութեան են գալիս, սակայն ժողովուրդների փոխյարաբերութիւնների կառուցումը աւելի դանդաղ գործընթաց է»:

Արդեջանցի գրողի այս հարցազրոյցն արդէն քննարկումների ու բազմապիսի մեկնաբանութիւնների առարկայ է դարձել ադրբեջանական մամուլում: Շատերը նրան քննադատում են Ղարաբաղը հայկական հող անուանելու համար, գրողին մեղադրում դաւաճանութեան մէջ:

Խօսելով ԽՍՀՄ-ի փլուզման հետեւանքների մասին՝ Ռուստամ Իբրահիմբեկովն ասել է. - «Նման հապճեպ բաժանումը չէր կարող առանց երկկողմ պահանջների անցնել: Վերցնենք Ադրբեջանն ու Հայաստանը. երբ մենք մի պետություն կազմում էինք, անգամ տարածքային խնդիրները ցանկութիւնների, ոչ թէ ռազմական գործողութիւնների բնոյթ էին կրում: Հայաստանում կարծում էին,

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ

Շարունակուած էջ 1-էն

ամբերիկեան կողմը մշտապէս կ'արծարծէ թուրք գործընկերներուն հետ հանդիպումներու ընթացքին, սակայն ինք որեւէ տեղեկութիւն չունի այդ կապակցութեամբ:

Երեւանի մէջ Սլովակիայի փոխվարչապետ եւ արտաքին գործոց նախարար Միրոսլաւ Լաչչակի հետ ունեցած միատեղ մամուլի ասուլիսի ընթացքին Նալբանդեան չի շեղուց, որ նշուած դիրքորոշումը կը համընկնի պաշտօնական Երեւանի դիրքորոշման հետ:

ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Միւս կողմէ, Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան Ապրիլ 10-ին յայտարարեց, որ միջազգային հանրութիւնը բազմիցս յայտնած է իր սկզբունքային դիրքորոշումը, որ հայ-թրքական յարաբերութիւնները պէտք է կարգաւորուին առանց նախապայմաններու:

«Այդ երկու հարցերը շաղկապելու փորձերը կարող են վնասել երկու գործընթացներին», - ըսաւ Նալբանդեան ու աւելցու որ, կրնայ սպաւորութիւն ստեղծուի, որ թրքական կողմը միտումնաւոր կը փորձէ շաղկապել հայ-թրքական յարաբերութիւններն ու դարաբաղեան կարգաւորումը՝ խանգարելով միջազգային հանրութեան եւ Հայաստանի՝ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման փորձերուն:

ՄԱՍԻՍ
ԱՍԵՆԱՎԱՍՏԱՐԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Ս.Դ.Յ.Կ.Ի ԱՅՑԸ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱԼՅՔԻ ԱՄՆ-Ի ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ



Նախապէս առնուած ժամադրութեամբ մը, անցեալ Հինգշաբթի, 4 Ապրիլ 2013, Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը այցելութիւն մը տուաւ, վերջերս Կլէնտէյլ փոխադրուած Հայ Կաթողիկէ համայնքի Միացեալ Նահանգներու եւ Գանատայի առաջնորդ Արհիպապտիկ Միքայէլ Եպս. Մուրատեանին: Պատուիրակութիւնը կը գլխաւորէր Ս.Դ.Հ.Կ.Ի շրջանիս ատենապետ Ընկ. Գաբրիէլ Մոլոյեան, ընկերակցութեամբ ընկ. Տօքթ. Արշակ Գազանճեանի եւ ընկերներ՝ Թովմաս Եթերեանի, Վարդան Քէօրօղլեանի եւ Լենա Մանուկեանի:

ԱՄՆ-ի եւ Գանատայի առաջնորդ՝ Արհ. Միքայէլ Եպս. Մուրատեան, սիրալիք ջերմ ընդունելութեամբ դիմաւորեց հիւրերը, իր շուրջ ունենալով Կլէնտէյլի եւ Լոս Անճելոսի Հայ Կաթողիկէ եկեղեցիներու ժողովրդապետներ Գրիգոր Վրդ. Շահինեանը, Արմենակ Վրդ. Պետրոսեանը, փոխ ժողովրդապետ՝ Հայր Անտոն Նորատունկեանը եւ Միխիթարեան վարժարանի տնօրէն Հայր Դաւիթ Ղազարեանը:

Իր ելոյթին մէջ ընկ. Մոլոյե-

ան շնորհաւորեց Գերապայծառ Տէր Միքայէլ Եպիսկոպոսը, որ առաջնորդարանը Նիւ Եորքէն Լոս Անճելոս փոխադրելով, որոշած էր իր կեդրոնը հաստատել այս հայաշատ գաղութին մէջ: Այս բարեբաստիկ առիթով շնորհաւորեց նաեւ սուրբ Զատիկուան տօնն ու Կաթողիկէ աշխարհի նոր քահանայապետ Նորին Սրբութիւն Ֆրանսիս Պապի ընտրութիւնը: Իր պատասխան ելոյթին մէջ Արհ. Միքայէլ Եպս. շնորհակալութիւն յայտնեց այցելութեան եւ ջերմ խօսքերուն համար: Այնուհետեւ դրուատեց նորընտիր Պապի բարեմասնութիւնները, ինչպէս նաեւ նկարագրի ինքնուրոյն յատկութիւններն ու մասնաւորաբար հայ ժողովուրդի արդար դատի եւ ցեղասպանութեան ճանաչման ի նպաստ իր ունեցած զօրակցութիւնն ու դրական կեցուածքը:

Սոյն հանդիպման ընթացքին խօսակցութեան նիւթ դարձաւ նաեւ սփիւռքահայ գաղութներու այժմու իրավիճակն ու սպառնացող վտանգները: Որպէս եզրակացութիւն անհրաժեշտ նկատուեցաւ հայ ժողովուրդի բոլոր հատուածներու միասնութիւնը հիմնահարցերու նկատմամբ:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԵՐԴՈՒՄ ՏԱԼՈՎ

Շաբաթակուած էջ 1-էն

Իրենց քայլով արտայայտած են դժգոհութիւն՝ երկրէն ներս առկայ խնդիրներու վերաբերեալ եւ չստակ ուղերձ չլաւ են իշխանութիւններուն եւ այդ ուղերձը տեղ հասած է:

Սարգսեան մատնանշեց մի քանի առաջնահերթութիւններ, որոնք խոստացաւ կեանքի կոչել: Անոնցմէ առաջինը տնտեսական յառաջընթացն է. - «Հայաստանի հիմնախնդիրների մի ողջ փաթեթ այս հարթութիւնում է: Կ'առանձնացնեմ երեք հիմնականը՝ արտագաղթ, գործազրկութիւն, աղքատութիւն: Դրանց լուծումները նոյնպէս այս հարթութիւնում են: Արդիւնաւէտ եւ վերելքի ճանապարհը բռնած տնտեսութիւն, ահա յաջողութեան մեր բանաձեւը»:

Որպէս երկրորդ առաջնահերթութիւն Սերժ Սարգսեան նշեց իրաւունքի գերակայութեան ապահովումը. - «Բոլորի հաւասարութիւնը օրէնքի առջեւ պարտադիր պայման է մեր թէ՛ տնտեսական, թէ՛ քաղաքական զարգացման համար»:

Որպէս երրորդ առաջնահերթութիւն նախագահը մատնանշեց ժողովրդավարութեան խորացումը. - «Համեմատէք 5 տարի առաջ ունեցած Հայաստանը այսօրուայ Հայաստանի հետ եւ կը տեսնէք տար-

բերութիւնը: Համեմատէք խօսքի, մամուլի, իրաւունքի ազատութեան մակարդակները: Համեմատէք հասարակական կազմակերպութիւնների եւ ընդհանրապէս քաղաքացիական հասարակութեան կացութեան մակարդակները: Խոստանում եմ, որ եղածով չենք բաւարարուելու»:

Երդման արարողութեան կը մասնակցէին Հայաստանի նախկին բռնապետ Ռոբերտ Քոչարեանը, Լեւոնայի Ղարաբաղի նախագահ Բակօ Սահակեան եւ արտասահմանէն հրաւիրուած հարիւրէ աւելի հիւրեր:

Ազգային ժողովի յատուկ նիստին ի պաշտօնէ պէտք է մասնակցէին Ազգային ժողովի բոլոր պատգամաւորները, բայց «Ժառանգութիւն», Հայ Ազգային Գոնկրէսի եւ Դաշնակցութիւն խմբակցութիւնները ներկայ չէին նիստին:

Ներկայ չէր նաեւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ եւ խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Գաբրիէլ Ծառուկեան: Ներկայ էին, սակայն, խմբակցութեան շարք մը գործարար անդամները:

Երդման արարողութեանէն ետք, Նախագահական Պալատէն ներս տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ:

ՄԱՐԱՑԱԲ ԿԼԵՆՏԵԼԻ ՄԵՋ ԼՈՅՍ ՏԵՍՆՈՂ «BUSINESS LIFE»-Ի ՀԻՄՆԱԴԻՐ ԾՈՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

80 տարեկանին Կլէնտէյլի մէջ, արտի հիւանդութեամբ մահացաւ «Business Life» ամսագրի հիմնադիր եւ հայ համայնքէն ներս գործունէութիւն ծաւալած ծոն Գրիգորեան: Ան հայրն է Կլէնտէյլի Ուսումնական Խորհուրդի անդամ Կրէկ Գրիգորեանի:

2011-ի վերջերուն Գրիգորեան արտի կաթուած ունենալով ինկած էր Կլէնտէյլի հրէջջներու կազմակերպած հրապարակային մէկ միջոցառման ընթացքին: Ան ներկայ էր միջոցառման, որպէսզի ստանայ «Հասարակութեան ծառայելը ինձմէ վեր է» շքանշանը: Այդ ժամանակ բժիշկները յաջողեցան փրկել Գրիգորեանի կեանքը:

Ծոն Գրիգորեան ծնած էր Քենեթիքէթ նահանգի Հարթֆորտ քաղաքը, 1932-ի Օգոստոս 24-ին: Անոր ծնողները որբ մնացած էին Հայոց Յեղասպանութեան հետեւանքով: 1951-53 թուականներուն Գրիգորեան ծառայած էր ամերիկ-



Ծոն Գրիգորեան

եան բանակէն ներս եւ մասնակցած Գորէական պատերազմին: Ան 1989-ին ընտանիքով տեղափոխուած էր Կլէնտէյլ, ուր վերջին 23 տարիներուն հրապարակած էր «Business Life» ամսագիրը:

Ծոն Գրիգորեան ամուսնացած էր եւ ունէր 8 զաւակներ եւ 23 թոռնիկներ:

ՈՍԻԿԱՆՆԵՐԸ ԱՐԳԻԼԵՑԻՆ ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐՈՒՆ

Շաբաթակուած էջ 1-էն

Բաֆֆի Յովհաննիսեանի «երդման» արարողութեան յաջորդեց երթ, դէպի Միասնիկեանի արձան՝ Մարտի 1-ի տասը անմեղ զոհերու յիշատակին ծաղիկներ դնելու:

Երթի ընթացքին Յովհաննիսեան լրագրողներուն ըսաւ, որ բախումներ թոյլ պիտի չի տայ: Սակայն, երբ երթի մասնակիցները հասան Պուշեան փողոց, ոստիկանութիւնը փակեց ճանապարհը՝ թոյլ չտալով ցուցարարներուն շարժիլ դէպի Բաղրամեան պողոտայ, ուր կը գտնուի Նախագահական պալատը: Ոստիկանները զինուած էին մահակներով եւ սաղաւարտներով: Մահակներով կը զարնէին վահաններուն՝ զոռչացնելով, որ ուժ պիտի կիրառեն: Երեւանի ոստիկանապետ Ներսէս Նազարեան եւ փոխոստիկանապետ Վալերի Օսիպեան յայտարարեցին, որ երթը անօրինական է՝ յորդորելով ետ դառնալ նոյն ճանապարհով:

«Ժառանգութեան» առաջնորդը յայտարարեց, որ նախագահի նստավայր երթալու մտադրութիւն չունի եւ պարզապէս կ'ուզեն Բաղրամեան փողոցով իջնել դէպի Ազատութեան հրապարակ: Տեսնելով, որ ոստիկանները անդրդուելի են, Յովհաննիսեան փորձեց անձամբ ձեռքէլ ոստիկանական պատնէշը, սակայն հանդիպեցաւ կոշտ դիմադրութեան:

Երեկոյեան տեղի ունեցաւ երկրորդ հանրահաւաք մը, որու ընթացքին Յովհաննիսեան յայտարարեց, որ երթով պիտի ուղղուին դէպի Բաղրամեան, ուրկէ երթը կը շարունակուի դէպի Հայոց ցեղասպանութեան զոհերու յուշահամալիր՝ Ծիծեռնակաբերդ:

Մոսկովեան փողոցէն բարձրանալով Բաղրամեան փողոց, ընդդիմադիր ցուցարարները հանդիպեցան մահակներով, վահաններով եւ սաղաւարտներով զինուած ոստիկաններու պատնէշին: Փակուեցաւ Բաղրամեան փողոցի երթեւեկութիւնը:

Բաֆֆի Յովհաննիսեան, մօտենալով ոստիկաններուն, փորձեց ձեռքէլ պատնէշը, սակայն հանդիպեցաւ դիմադրութեան: Ոստիկանները սկսան վահաններով հետ հրել ցուցարարներուն: Բաֆֆի Յովհաննիսեան, ոստիկաններով շրջապատուած, բարձրախօսով ելոյթ ունեցաւ եւ դիմելով Հայաստանի ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանին, կոչ ըրաւ բանալ ճանապարհը՝ թոյլ տալով իր հակիրէներուն խողաղ երթով Բաղրամեան փողոցով երթալու դէպի Ծիծեռնակաբերդ:

Ոստիկանութիւնը սակայն անդրդուելի մնաց: Ցուցարարները փորձեցին երկրորդ անգամ ձեռքէլ ոստիկանական պատը եւ կրկին հանդիպեցան դիմադրութեան:

Քիչ ետք Բաղրամեան փողոց եկաւ Վլադիմիր Գասպարեան եւ 15 վայրկեան Յովհաննիսեանի հետ բանակցութիւններ վարեց: Ապա, ցուցարարներու մէկ մասը Յովհաննիսեանի եւ Վլադիմիր Գասպարեանի հետ Սարեան փողոցով ուղղուեցան Ծիծեռնակաբերդ:

Ժողովուրդի մէկ մասը մնաց Բաղրամեան պողոտայի վրայ: Յովհաննիսեան Ծիծեռնակաբերդէն վերադառնալով դարձեալ միացաւ Բաղրամեանի վրայ հաւաքուած ժողովուրդի:

Այսպէս շարունակուեցաւ մինչեւ երեկոյեան ուշ ժամերը, երբ ժողովուրդը սկսաւ ցրուուիլ:



massispost.com daily news updates

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՄՐՈՒԹԻՒՆՆ ԱՌԱՋԻՆՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԾՐԱԳՐԵԼ

«Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրութեան կենտրոնում» շաբաթ օրը կայացաւ սեմինար-հանդիպում «Ցեղասպանութեան ծրագրի ծագումնաբանութիւնը» թեմայով:

Սեմինարի բանախօսն էր ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի տնօրէն, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբէն Սաֆրաստեանը:

Սեմինարը վարում էր «Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրութեան կենտրոնի» տնօրէն Հայկազուն Ալվրցեանը: Հանդիպմանը ներկայ էին մեծ թուով ուսանողներ, երիտասարդ մասնագէտներ, գիտնականներ:

Ռուբէն Սաֆրաստեանը նշեց, որ մտահոգիչ է այն, որ ներկայում երիտասարդները չըմբռնում Հայոց ցեղասպանութեան թեման ակտիւ քննարկումների առարկայ չի հանդիսանում:

Ապա թուրքագէտը ներկայացրեց Օսմանեան կայսրութիւնում Հայոց ցեղասպանութեան ծագումնաբանութիւնը:

Սաֆրաստեանն առանձնացրեց չորս փուլեր, որով ապացուցում էր Օսմանեան կայսրութեան ցեղասպան պետութիւն լինելու բնույթը:

Նախ բանախօսը ներկայացրեց 1876 թուականին բուլղարների դէմ ցեղասպանութիւն իրականացնելու ծրագիրը, որը մշակուել էր Միդհատ փաշայի գլխավորութեամբ, սակայն հանգամանքների բերումով ի կատար չածուեց:

Ապա յիշատակուեցին 1894-96 թուականներին օսմանեան սուլթան Աբդուլհամիդ Երկրորդի կողմից կազմակերպուած հայկական ջարդերը, որոնք Օսմանեան կայսրութեան՝ հայերին բնաջնջելուն ուղղուած քաղաքականութեան մի մասն էին:

Ապա անդրադարձ կատարուեց 1915 թուականին սկսուած Հայոց ցեղասպանութեան իրագործմանը, որը կանխամտածուած բնույթ էր կրում եւ իրականացում ոչ թէ միայն երիտթուրքական կառավարութեան կողմից, այլ օսմանեան պետութեան կողմից եւ մուսուլման բնակչութեան մասնակցութեամբ:

Բանախօսն անդրադարձաւ նաեւ օսմանեան ցեղասպան քաղաքականութեան չորրորդ փուլին (Հայոց ցեղասպանութեան երրորդ փուլին)՝ 1920 թուականի Նոյեմբերին: Հոկտեմբերի 30-ին Քիւրդիմ Քարաբեքիրի գլխավորութեամբ թուրքական զօրքերը գրաւեցին Կարսն, ապա անցան Ալեքսանդրապոլ: Քարաբեքիրի յուշերից պահպանուել է մի հատուած, որտեղ պատմում է, թէ ինչպէս Անկարայից եկած պաշտօնական հեռագրում թուրք զօրահրամանատարին հրամայում էր քաղաքականապէս եւ ֆիզիկապէս ոչնչացնել Հայաստանը:

Սաֆրաստեանը նաեւ նշեց, որ ներկայում գոյութիւն ունի երեք փաստաթուղթ, որոնք յստակօրէն ապացուցում են, որ Օսմանեան կայսրութիւնում հայերի դէմ կատարուել է կանխամտածուած եւ նախագծուած ցեղասպանութիւն՝ ղեկավարուելով պետութեան կողմից:

Նա նաեւ նշեց, որ այսպիսով Օսմանեան կայսրութիւնն աշխարհում հանդիսացել է առաջին պետութիւնը, որը ցեղասպանութիւն

է նախագծել:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան եւ Հոլոքոստի նմանութիւններին՝ Սաֆրաստեանը նշեց, որ գլխավոր տարբերութիւններից մէկն այն է, որ Հայոց ցեղասպանութեան հետեւանքով հայ ժողովուրդը ոչ միայն ֆիզիկական բնաջնջման ենթարկուեց, այլ նաեւ կորցրեց իր հայրենիքը, մինչդեռ հրեաների դէմ կոտորածներն իրականացուեցին Եվրոպայում՝ պատմական հայրենիքի սահմաններից դուրս:

Սաֆրաստեանը նաեւ նշեց, որ Ռաֆայէլ Լեմկինի կողմից մշակուած ցեղասպանութեան սահմանումը (1944 թուական), ունի լրացումների կարիք:

Թուրքագէտը նաեւ նշեց, որ Հայաստանի համար ներկայում մեծ նշանակութիւն ունի ստեղծել մասնագէտներից կազմուած համատեղ յանձնաժողով, որը Հայոց ցեղասպանութեան ճանաչման վերաբերեալ ազգային յստակ քաղաքականութիւն եւ քայլեր կը մշակի: Նա նշեց, որ յատուկ խմբում պէտք է



հաւաքուեն լաւագոյն հայաստանցի մասնագէտները, ինչպէս նաեւ սփիւռքահայ եւ արտասահմանցի գիտնականները եւ տարիների համատեղ աշխատանքից յետոյ մշակեն մեր պետութեան յստակ քայլերը Հայոց ցեղասպանութեան համար թուրքիային պատասխանատուութեան ենթարկելու համար: Նա նաեւ նշեց, որ նման փորձ նախկինում եղել է, սակայն այն իր

աւարտին չի հասցուել: Բանախօսի ելույթից յետոյ ներկաները հնարաւորութիւն ստացան հարցեր ուղղել Սաֆրաստեանին եւ քննարկում ծաւալել, Իսկ արդէն հանդիպման աւարտին բանախօսները փաստեցին, որ հանդիպմանը ներկայ երիտասարդներն ունեն գիտելիքի հարուստ բազա, ինչն էլ ուրախացնում է նրանց:

GENOCIDE COMMEMORATIVE EVENT

HOMENMEN LADIES AUXILIARY
Presents Special Screening of

THE LARK FARM

A POWERFUL MOVIE ABOUT THE ARMENIAN GENOCIDE

FRIDAY, APRIL 19TH, 2013
AT 8:00 PM

GARO SOGHANALIAN HALL
1060 N. Allen Ave., Pasadena, California 91104

Admission \$15

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 98-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՍԵՋ



Փաստինաի Հայկական Համագործակցության Մարմինը՝ որ կազմուած է եկեղեցական, մշակութային, բարեսիրական, հայրենակցական եւ կուսակցական կազմակերպութիւններէ, մեծ շուքով պիտի յիշատակէ Հայկական Յեղասպանութեան 98րդ տարեդարձը:

Արդարեւ՝ Չորեքշաբթի, 24 Ապրիլ, 2013ի առաւօտեան ժամը 10:00ին, վերոյիշեալ ձեռնարկը տեղի պիտի ունենայ Փաստինայի Յիշատակի Ձբօսայգիին մէջ (Memorial Park):

Յուշահանդէսը պիտի սկսի դրօշակի արարողութեամբ՝ կատարողութեամբ Միացեալ Նահանգներու Ծովային Ձոկատի անդամներուն (Marine Corps): Իսկ բարեկի կեցած՝ իրենց յարգանքը պիտի մատուցանեն ՀԲԸ Միութեան Փաստինայի Մասնաճիւղի արիներն ու արեւոյշները:

Հուսկ ապա Փաստինայի Մարշըլ Երկրորդական Վարժարանի

նի աշակերտական երգչախումբը պիտի կատարէ Ամերիկեան եւ Հայկական քայլերգները: Որմէ ետք՝ իրենց սրտի խօսքերով հանդէս պիտի գան տեղական թէ նահանգային կառավարութիւնէն պետական անձնաւորութիւններ:

Յուշահանդէսի աւարտին, ներկայ հասարակութիւնը պիտի առաջնորդուի նոյն զբօսայգիին մէջ Հայկական Յեղասպանութեան ապագայ Յուշակոթողին յատկացուած վայրը՝ ուր պատկան մարմիններէ ներկայացուցիչներ պիտի գետեղեն պատշաճ ծաղկեպսակ մը:

Շրջանի հայութիւնը կը հրաւիրուի խոնարհմամ մասնակցիլ այս յուշահանդէսին՝ իր զօրակցութիւնը բերելու մեր անմահ զոհերու խնկելի յիշատակին եւ խոստանալու որ երբեք պիտի չմոռնայ նշելու քսաներորդ դարու առաջին Յեղասպանութիւնը:

Փաստինայի Հայկական Համագաղութային Մարմին

ՍԱՀ ՓՐՈՖԵՍՈՐ ՄԵՍՐՈՊ ՊԱԼԱՅԵԱՆԻ (1925-2013)

Յաւով իմացանք իրանահայ ականաւոր գիտնական փրոֆեսոր-Դոկտոր Մեսրոպ Պալայեանի մահը, որ պատահած է Ապրիլ 2ին:

Հանգուցեալ Մեսրոպ Պալայեան մեծ ներդրում ունեցած է գրական, մանկավարժական, գիտական եւ հոգեբանական բնագաւառներուն մէջ: Եղած է համալսարանի անուանի դասախօս: Պարակերէնի թարգմանած է Պալգաքի գործերը: Աւարտած է Փարիզի Սորբոնի համալսարանը: Հիմնադրած է «Մանկա-պատանեկան հրատարակչական ֆոնտ»:

Գէյմպրիճի (Լոնտոն) Միջազգային Կենսագրական Կեդրոնի կողմէ 1997-98 թուականներուն յայտարարուած է «Տարուան Միջազգային Մարդը»: Դոկտ. Մեսրոպ Պալայեան արժանացած է 8 ոսկեմետալի: Ինչպէս նաեւ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի կողմէ պարգեւատրուած է Մեսրոպ Մաշտոց շքանշանով:



«Մասիս»ի խմբագրութիւնն ու աշխատակազմը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ Պալայեան ընտանիքին, մասնաւորաբար Յովհաննէս եւ Ներսէս Պալայեաններուն:

ՎԱՉԷ ՍԵՄԵՐՃԵԱՆ ՊԱՐԳԵԿԱՏՐՈՒԱԾ Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ ՇՔԱՆՇԱՆՈՎ

Կիրակի, Ապրիլի 7ին, 2013, Պըրպէնքի Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ, հանդիսաւոր արարողակարգով, ձեռամբ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, Ամենայն Հայոց հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի, կոնդակի ընթերցումէն ետք, Ս. Սահակ, Ս. Մեսրոպ շքանշանով պարգեւատրուեցաւ վաստակաշատ մանկավարժ, լրագրող եւ հասարակական գործիչ Վաչէ Սէմէրճեան:

Այս առթիւ թեմիս առաջնորդ Յովնան Սրբազան բարձր գնահատեց օրուան մեծարեալ Վաչէ

Սէմէրճեանի տասնեակ տարիներու նուիրումն ու ծառայութիւնները հայ նորահաս սերունդի դաստիարակութեան, ինչպէս նաեւ՝ օգտաշատ ներդրումը մեր գաղութի մշակութային եւ հասարակական կեանքին մէջ: Մեծ է նաեւ Վաչէ Սէմէրճեանի վաստակը յատկապէս լրագրական եւ մշակութային կառուցներէն ներս:

«Մասիս»ի խմբագրութիւնը ջերմօրէն կը շնորհաւորէ մեծարեալ Վաչէ Սէմէրճեանը, մաղթելով քաջաուղղութիւն եւ արգասաբեր տարիներ:

Պատիւս արժանաւորաց:

ԴԵՍՊՈՒՆ ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ԿԼԵՆՏԵՅԼԻ ՍԵՋ

«Անհրաժեշտ է որ միասնական աշխատանքով մեր պայքարը յառաջ տանինք»:

Վերջերս Լոս Անճելոս կը գտնուէր Աւստրիոյ մօտ Հայաստանի հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Արման Կիրակոսեանը: Այս առթիւ Ապրիլի 2ին, իրանահայ Միութեան սրահին մէջ, կազմակերպուած էր հրապարակային ասուլիս մը, որուն ներկայ գտնուեցան աւելի քան 300 հանդիսականներ: Օրուան գլխաւոր բանախօս Տիար Արման Կիրակոսեանի նիւթն էր «Հայաստանի եւ շրջանային անվտանգութիւնը»:

Յարգելի դեսպանը անդրադարձաւ Հայաստանն ու տարածաշրջանը յուզող հիմնական խնդիրներու մասին: Ան մասնաւորաբար կեդրոնացաւ Հայաստանի եւ Ղարաբաղի անվտանգութիւնն ապահովելու եւ պաշտպանելու անհրաժեշտութեան վրայ: Շեշտեց Հայաստան-սփիւռք միասնական աշխատանքի կարեւորութիւնը: Այսպիսով է, որ կարելի է դիմագրաւել Ատրպէյճանի եւ

Թուրքիոյ կողմէ սիստեմատիկ կերպով, տարբեր մարզերու մէջ յառաջ տարուող լայնածաւալ աշխատանքները: Այնուհետեւ ընդգծեց որ Հայաստան իրատես քայլերով, բազմաշերտ գործակցութիւն մը կ'իրականացնէ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Եւրոպական Միութեան, ՆԱԹՕ-ի եւ այլ կազմակերպութիւններու հետ:

Երիտասարդ եւ փորձառու դիւանագէտն իր եզրակացութեան մէջ ըսաւ. Հայաստանի իշխանութիւններուն դէմ գաղափարական, տարբեր համոզումներով տարակարծիք ըլլալը, ընդդիմադիր դիրքերը բնական համարելով հանդերձ՝ անհրաժեշտ է որ միասնական աշխատանքով, մեր պայքարը յառաջ տանինք, քանի որ Հայաստանի եւ Արցախի անվտանգութիւնը պաշտպանելը՝ ներկայիս կը համարուի թիւ մէկ խնդիր:

Արման Կիրակոսեան վստահեցուց, որ Արցախի անկախութեան ճանաչումը պիտի իրականանայ ուշ կամ կանուխ:

Զմեյերայիս ԽՐԱԽՆՃԱՆՔ ԵՎ ԳԵՂԵՍՏԻՅԱՆ ԳԵՂԵՍՏԻՅԱՆ ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ Ծաբաթ, 13 Ապրիլ 2013 երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ 1060 North Allen Avenue Pasadena, CA 91104 Տոմսերու քամար դիմել՝ (818) 913-9311 ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ՝ \$25.00

massispost.com daily news updates [QR code]

ՀԱՐԻՒՐԱՍԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ



Համակարգուած աշխատանք՝ յանուն ազգային գերագոյն շահերու իրագործման: Այդ ուղղութեամբ քննարկումներ կատարելու նպատակով Լիբանան կը գտնուին Միջին Արեւելքի երկիրներուն մէջ գործող, Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակի ոգեկոչման կեդրոնական մարմիններու ներկայացուցիչները:

Իրանէն, Իրաքէն, Քուէյթէն, էմիրութիւններէն, Յորդանանէն, Եգիպտոսէն, Կիպրոսէն, Սուրիայէն հասած հայորդիներ, Անթիլիասի մայրավանքին մէջ միացան իրենց լիբանանահայ պաշտօնակիցներուն, ուսումնասիրելու համար Յեղասպանութեան ոգեկոչման միջոցառումները համակարգուած աշխատանքով եւ միասնական շարքերով կազմակերպելու միջոցները:

Ղարաբաղեան պատերազմի հերոս Արամ (Արամ Մուրադեան) Երեւանեան բարձրակարգի մը իններորդ յարկի բնակիչ, անհամբեր կը սպասէ իր սիրասուն կնոջ, որպէսզի վարէն մինչեւ վեր գոյլ մը ջուր բարձրացնէ: Խիստ վրդովուած է ան ի տես անոր չարչարանքին եւ անհեռանկար վիճակին: Մինչ այդ իր մտերիմ ընկերը, ուստիկան Ղազար (Ջարեհ Առաքելեան) կատարելով Արամի խնդրանքը, կը բերէ գոյգ մը պարան, գոր անմիջապէս կը թաքցնէ Արամ: Ղազար կու տայ նաեւ Ղարաբաղի մարտընկերներուն կողմէ յատուկ Արամի համար լեցուած երկու շիշ թուրթի օղի: Ջգացուած է Արամ, որ տակաւին զինք յիշող «տղերք» կան: Գայիանէ՛ կինը (Մէրի Համբարձումեան) ժամանակէն շուտ խամրող գեղեցկուհի մըն է, որ դեռ ամուսնական երջանկութիւնը չվայելած սիրած ամուսին ջամբած էր ռազմաճակատ:

Արամի համբերութիւնը հատած է այլեւս զինադադարի յաջորդող տարիներուն: Ամէն կողմ

կը տեսնէ լքեալութիւն, ժողովուրդին ցաւերուն ու նուազագոյն պահանջներուն հանդէպ յանցաւոր անտարբերութիւն: Ուր որ է պիտի պայթի ան: Ինչպէ՞ս դիմանալ այս ժողովուրդի քաշած անլուր տառապանքներուն, ինչպէ՞ս հանդուրժել նորօրեայ ցեցերն ու կոճակաւոր պատգամաւորներու, օլիգարխներու եւ գրպանատենչիկ իշխանաւորներու ալան-թալանը:

Պահ մը Գայիանէն ու Արամը անցեալի ու ներկայի համեմատութիւնը կատարելու փորձութեան մէջ կ'իյնան: Կը յիշեն բառեր, որոնք իրենց անցեալի աւօրեային մէջ կային, ինչպէս «համբոյր», «սեքս», «սիրել» եւ այլն: Այսօր անոնց բառապաշարէն դուրս մնացած ու մոռցուած են այդ բառերը՝ իրենց անլոյս ու անյոյս կեանքին մէջ: Արամ որոշած է իր որոճած ծրագրով ցնցել պետութիւնն ու աշխարհը - մատաղ ընել իր սիրասուն կինը, որուն տառապանքները ա՛լ չի կրնար տանիլ: Եւ գուրգուրոտ լեզուով կը համոզէ կինը, որ կապուի ու մատաղ ըլլայ, չէ՞ որ «Մի ամբողջ ժողովուրդ է մատաղ լինում, դու էլ եղիւր մի մատաղ, որպէսզի ողջ աշխարհը իր ուշադրութիւնը դարձնէ ժողովուրդին ապրած ողբերգութեան վրայ»: Միամիտ գուցէ, բայց այս է միակ միջոցը իր դիմաց բերելու ուստիկանապետն ու վարչապետը, նախագահն ու գանգուածային լրատուութեան միջոցները:

Կապկպուած Գայիանէ պարանով կապուած կը հանուի պատուհանէն դուրս՝ որեւէ ատեն գահավէժ ինչնալու ենթակայ: Յարկաբաժնի դրան կը մօտենայ Ղազարը եւ կը ինդրէ հրաժարիլ այդ անխոհեմ քայլէն. «Չմօտենա՛ս, ես զինուած եմ» կ'ըլլայ վճռական պատասխանը: Կը հեռաձայնէ ուստիկանապետը, ապա վարչապետը: Ան բոլորին կու տայ նոյն պատասխանը: Լրագրողներ ու հեռուստատեսութեան աշխատակիցներ կը պահանջէ: Մինչ այդ «մատաղցու» Գայիանէ օղին մէջ կախուած կ'ապրի իր հոգեվարքի վայրկեանները: Ի վերջոյ Արամ իր կնոջ աղաչանքներուն անսալով վեր կը քաշէ նուաղած Գայիանէն եւ բուժ աշխատող կը պահանջէ՝ «Կինս մահանում է, շո՛ւտ արէք» գոռալով: Կը հասնի բժշկուհին (Արշալոյս Դարբինեան): Վերջինս ցոյց կու տայ անհրաժեշտ բուժօգնութիւն, բայց այս անգամ ինք կը յայտնուի պատանդ-մատաղի դիրքին մէջ: Արամ իր գայրոյթին մէջ անգամ

Շաբ.ը էջ 17

ՊԱՅ ՍԸ ՈՒՍՈՒՅԻՉ ՈՒ ԳՐԱԳԵՏ ՊԵՊՕ ՍԻՍՈՆԵԱՆԻՆ ՅԵՏ

ԹՈՐՈՍԹՈՐԱՆԵԱՆ

Մեր ծանօթութիւնը այս ուսուցիչ ու գրագէտ Միմոնեանին հետ վաղեմիութիւն մը ունի, կը սկսի 1959 թուականէն. կարծէք դարեր առաջ ծանօթացած ըլլալինք իրարու:

Ամէն անգամ որ Հալէպէն ժամանած կ'ըլլանք Պէյրութ, անպատճառ անակնկալ զանգի մը առջեւ իր տան դուռը կը բացուէր մեր առջեւ:

Այսօր նոյն անակնկալ զանգն էր որ տուի: Մուտքը անակնկալ էր, բայց մենք ծրագրելով մը գացած էինք մեր բարեկամին մօտ:

Ողջոյնի խօսքերէ ետք մեր պաշտուակը բանալով տրցակ մը թուղթ հանեցինք ըսելով.- Պէպօ ճան, եկած ենք հարցազրոյց մը ընելու համար ձեզի հետ մէկ հարցի շուրջ: Այս օրերուն, երբ այնքան մօտեցած ենք Հայոց Մեծ Եղեռնի դարադարձին, ինչ մտորումներ պաշարած են ձեզ...: Միմոնեան.- Մեր մանկութեան տարիներուն Ապրիլ 24-ը արձակուրդի օր մըն էր մեզի համար, խաղի օր մը: Բայց երբ հասակ առինք գիտակցեցանք այն իրողութեան, որ այդ օրը մեր ժողովուրդի պատմութեան սեւագոյն թուականն էր: Նախնական, միջնակարգ ու բարձրագոյն ուսումի տիրանալէ ետք որոշեցի ընդգրկել ուսուցչական ասպարէզը: Մեր ուսուցիչները մեզ դաստիարակած էին այնպէս մը, որ մեզ ուղղած էին ազգին ծառայութեան: Այսպէս, ամէն տարի երբ կը գտնուէինք Ապրիլ 24-ի նախօրէին, մեր աշակերտները խմբելով կը խօսէին թէ ինչպէս՝ եւ ինչու թուրքերը ջարդեցին մեզ: Նման պահերու կ'ոգեկոչէինք մեր նահատակ գրագէտներուն յիշատակը, որովհետեւ անոնք մեր պատկերացումներուն մէջ մեծ հսկաներ էին, ազգը առաջնորդող նուիրեալներ:

Թորանեան.- Հսկանե՞ր թէ սուրբեր Միմոնեան. - Այո՛, կրնանք ըսել սուրբեր, անոնք մեր ազգը կ'առաջնորդէին դէպի մշակոյթ ու գիտութիւն: Ամէն Ապրիլ 24-ի նախօրէին աշակերտները խմբելով կը խօսէինք այն մասին, թէ ինչու թուրքը ամէնէն առաջ ձեռքալալով մեր մտաւորականութիւնը, առաջնորդ տարրը մեր ժողովուրդին, ու չարչարազին մահի ենթարկելով անգլուխ թողուցին հայութիւնը, կը բացատրէինք թէ ինչ հաւաքով չարչարանքի տակ մահուն ատարի Գրիգոր Զօհրապը, Դանիէլ Վարուժանը, Ռուբէն Սեւակը եւ ամբողջ մտաւորականութեան դասը հայութեան:

Թուրքը բարբարոս ներկայացնելը քիչ էր: Անմիջապէս նկատելի կը դառնար, որ մեր աշակերտներուն աչքերը կը մշուշուէին եւ արցունք կը հոսէր անոնց աչքերէն:

Մեր մանկութեան յիշողութիւններէն մէկն ալ այն էր, որ մեր ճեմարանական ուսուցիչներէն մէկը, Ապրիլ 24-ի առիթով իր խօսքին մէջ կ'ըսէր.- Թուրքերը մեզ ջարդեցին, բայց մեր ժողովուրդը ոչ միայն կը վերապրի, այլ մեր հայրենիքին մէջ կը վերածաղկի, հոն մեր աղջիկներն ալ օղաչուներ են եւ նոյն այդ ուսուցիչը մեր, բարձրախօսելով կ'աւելցնէր.- Ապրիլ 24-ը մեզի համար գերեզմաններու ցուցադրութեան օր չէ՛, երբ մեր նահատակները գերեզման չու-

նեցան, Ապրիլի 24-ը մեր ժողովուրդին Յարութեան օրն է: Ուստի մենք ազգովին մեզի եւ աշխարհին պէտք է ներկայանանք ոչ որպէս ջարդուած, այլ Յարութիւն առած, վերապրող ժողովուրդ:

Մինչեւ 1965 թուական Ապրիլ 24-ը մեզի համար ոգեկոչումի առիթ էր: Մեծ Եղեռնի 50 ամեակի նշումը այդ թուականէն սկսեալ, երբ մեր ժողովուրդը ազգովին՝ ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի, միաւորուեցաւ, բուռնցըրուեցաւ եւ առաջին անգամ ըլլալով աշխարհին ներկայացաւ որպէս պահանջատէր ժողովուրդ:

Մեծ Եղեռնի յիսնամեակը բացայայտեց մեր ազգի հաւաքական կամքը ի լուր խուլ աշխարհին: Այդ թուականը եղաւ հայկական պահանջատիրութեան մեկնակէտը:

Ամէն հայ ու ոչ հայ կը յիշէ, որ Պէյրութի հսկայ մարզաւանը ինչպէս երկու օր հեղեղուեցաւ հայ բազմութիւններով, առաջին օրը նշելու համար Ապրիլ 24-ի կիսադարեան անմոռանալի օրը, եւ երկրորդ օրը նշելու համար հայրենի ֆութպոլի Սպարտակ (Արարատ) խումբին Խորհրդային Միութեան մէջ ախոյեանութեան հասնիլն ու Պէյրութի մարզաւանին մէջ խումբին մուտքը: Երբ առիթը ներկայանայ, ներկայանալն ալ մեր ձեռքին ըլլալու է, հայը կրնայ բարձունքներ նուաճել.- որքան ճիշդ էր Ջարենցի պատկերաւոր խօսքը. - «Եթէ ուզեն երկինքներից վար կը բերեն արեգակներ, եթէ ուզեն դէպի երկինք կը շարտեն արեգակներ» գանգուածները:

Այդ օր Եղեռնէն վերապրած մամիկներ ու պապիկներ, առանց նոյնիսկ գաղափար մը ունենալու ֆութպոլի խաղի մասին, դաշտ եկած էին ծափահարելու համար հայրենի մարզիկներուն:

Անոնք իրենց ներկայութեամբ թուրքէն վրէժ առնելու զգացումը կ'ապրէին:

Այսպէս, մեր օրերուն Ապրիլ 24-ը հետզհետէ դարձաւ ոչ թէ սգատօս, այլ՝ պահանջատիրութեան օր: Որովհետեւ մենք ոչ միայն սուած էինք մէկուկէս միլիոն նահատակ, այլ կորսեցուցած էինք նաեւ մեր դարաւոր հողերը: Ու պատահական չէր, որ նոյն օրերուն մեր հայրենի երիտասարդութիւնը եւ ողջ հայրենաբնակ ժողովուրդը հակառակ վարչակարգի ճնշումներուն, հարիւր հազարներով իջաւ փողոց ու ողողեց ամբողջ Երեւանը՝ մէկ կարգախօսի տակ՝ հողերը, կ'ուզենք մեր հողերը...:

Այսպէս, թէ՛ Հայաստանի, թէ՛ Սփիւռքի համար Մեծ Եղեռնի յիսնամեակի նման պոռթկումը մեր ժողովուրդին եղաւ ազգանշան, որ մենք այնուհետեւ եղեռնի ոգեկոչումը կատարենք միացեալ ուժերով, միշտ որպէս կարգախօս ունենալով հայ հողերուն պահանջը: Որովհետեւ հողը չի տրուիր, յափշտակուած հողը կը վերառնուի՝ միացեալ ուժերով:

Երեւանի սրտին վրայ որպէս հայ ժողովուրդի աղաղակ վասն վանտալական ցեղասպանութեան, Միծեռնակաբերդին կառուցումը իր անմար բոցով մեզ ազգովին բերաւ ուժերու նոր համախմբումի: Այնուհետեւ, ամէն Ապրիլի 24-ին մենք ակնաստես կ'ըլլանք բազամահազարներու կողմէ դէպի Մի-

Շաբ.ը էջ 17

ՄՐՋԻՒՆՆԵՐԻ ԽԱՅԹՈՑ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Սեպտեմբերեան օր էր, ոտքիս ցաւից անհանգիստ երկարել էի մահճակալիս գովամուղը միացրած: Մենակ էի սենեակումս մտքերի մէջ ընկղմուած, անցեալն էր գլխումս օրօրուում, մի ամբողջ կեանք թեհրանում՝ ծնողների եւ հարազատների դամբարաններ, անմոռանալի յուշեր թողած այնտեղ նորն այստեղ սկսած, ինչ արած պէտք է շարունակել կեանքը՝ անցեալը պատմութիւն դարձած, նորն էլ պատմութիւն դառնալու ճամբին, ո՞ւր, օտար երկնակամարների տա՞կ, անհիմն ու յեղեղուկ: Այսպէս յուշերով էի տարուած, երբ ինձ տեղեկացրին, թէ՛ Արամն է եկել: Մայրամուտի մօտերն էր, արեւի կիզիչ ճառագայթները խամբել էին, երբ պատուհանի փեղկից նկատեցի՝ Արամն էր իր յաղթ հասակով, նա ինձ տեսնելով պառկած վիճակում հետաքրքրուած հարց տուեց.

-Ի՞նչ է պատահել, այսպէս երկար պարզուել ես:

Շտկուելով տեղիցս եւ մի տեսակ ամօթից քաշուելով, որ մըջիւնի խայթոցի պատճառով եմ անկողին մտել, նախ՝ հրաւիրեցի նստել, ապա՝ պատասխանեցի.

-Ոտքիս ցաւից Արամ, տե՛ս, ոտքս ի՞նչ ուռել է, կարմիր ճակնդեղ է դարձել:

-Հա, իսկապէս, ինչի՞ց է առաջացել:

-Եթէ ասեմ, անկասկած պիտի ծիծաղես վրաս:

-Բայց այն ինչ որ տեսնում եմ, պէտք է մեծ սողունի կծած բան լինի:

-Երանի կարիճի կամ մորմի կծած լինէր, գոնէ չէի ամաչի:

Այս իմ երկմտանք արտայայտութիւնը մեր բարեկամին մղեց աւելի հետաքրքրուելու:

-Թուածդ անուններից բացի միթէ ուրիշ ինչի՞ կծած պիտի լինի:

-Մըջիւնի կծած է, այն էլ ոչ թէ մէկ, այլ՝ մի խումբ մըջիւններ:

-Մի խումբ մըջիւնների՞:

-Այո՛, ինչպէս գիտես, մեր շէնքի ետեւի մասը լրիւ հող է մըջնանոցի յարմար բնակավայր, այնտեղ գտնուում են մի քանի ծառեր, հնամեայ սալորի ծառը չորացած կմախք էր դարձել, տհաճ տեսարան:

-Այդ չորացած ծառը տեսել եմ, իրաւ որ ամէն ինչ իր պատշաճ պատուածքով կամ հագուստով է գեղեցիկ,

-Դրա մի մասը կտրել էի Հրայրի օգնութեամբ, այն մասն էլ փորձեցի առանձինս ելեկտրական սղոցով:

-Ո՞վ է այդ Հրայրը, որ կատարած երախտիքը չես մոռացել յիշելով անունը:

-Սրտանց կատարուած օգտակար արարքը չի մոռացուում: Հրայրի հետ ծանօթացել եմ այստեղ Գլենդէյլում, նոյն 2005-ի սկիզբն ենք Ամերիկա եկել: Նա մանուկ հասակում որբացել է, հօրաքոյրն է նրան մեծացրել, որին մօր պէս սիրում եւ պաշտում էր, նա որբ տեղովը կարգին մարդ է դարձել, թեհրանում բանկային կարեւոր պաշտօնեայ էր, հանգստի կոչուելով Ամերիկա է արտագաղթել, կինն էլ ուսուցիչ է եղել թոշակի անցած:

-Ինչպէս երեւում է՝ ինչքը գլխին մէկն է:

-Այո՛, այդպէս է, գրկանքներ տեսած, անհէրուամէր բամբը գլխին հանդերձ պարզերես արժանապատիւ կեանքով է ապրել:

-Լա՛ւ, քո պատմութիւնը շարունակիր:

-Հողաթափերս հանած սկիւռի պէս ծառը բարձրացայ եւ աշխատանքի լծուեցի, այդ ընթացքում միտքս գնաց նրա էն երիտասարդ տարիներին, թէ ինչպէս ամէն գարնան ծաղկում էր, գեղեցիկութիւն էր սփռում շուրջը, պտղաւորում էր, հաճելի վայելք էր պատճառում նախկին տիրոջը, սակայն ստերջանալու եւ չորանալու վիճակում էր գտնուում, այո՛, ամէն էակ, լինի դա արարած, բոյս կամ կենդանի, որոշ ժամանակ է յատկացուած իրեն դրսեւորուելու, էութիւնը ցուցադրելու կեանք: Ուրախ էի, որ նրանից արձակուած մատղաշ մի քանի ծիւղեր խնամքովս անեցնելու վրայ եմ, որոնք փոխարինելու են մայր կոճղին:

-Նեղութեան կարժի՞, որ նրա ծիւղերին ես հոգ տանում, միտքս այն է, թէ պտուղը քաղցր է՞, քանի որ պտուղից է հասկացում ծառի տեսակն ու որակը:

-Մեր այս բնակարանը տեղափոխուելու ժամանակ մի քանի կանաչ ճիւղերից ըմբռնեցինք մի քանի հատ մեղրի նման քաղցր հատիկներ, ահա այս պատճառով որոշեցի անեցնել ծիւղերը: Մայրը չկայ, բալէն կայ, պէտք է լաւին պահել ու գուրգուրալ: Լաւ, թող անցնեմ իմ պատահարի պատմութեան:

-Հա՛, շարունակիր՛ր:

-Ինչպէս ասացի՝ անշունչ ճիւղերը կտրտելուց յետոյ կոճղից ցած իջայ, հագայ հողաթափերս, ձախ ոտքիցս՝ երես ու ներբան, սրունդ ու մատներ եւ գարշապար, մըմուռներ զգացի, ոտքիս թաթը ազատեցի հողաթափից, ինչ տեսնեմ, մըջիւններ ոտքիս տարբեր մասերում զբաղուած են կծելով, իմ կողմից այլեւս ուշացած գործողութիւն, միայն հապճեպ թափել տուի նրանց: Ինչպէս երեւում էր, նրանք իրենց խմբական յարձակումով, լուծել էին իրենց ընկերների վրէժը: Պիտի ասեմ արդար վրէժ, քանի որ նրանց բոյներին աւար ու աւեր էի հասցրել, շարիքի դէմ շարիքն էր գործել:

Արամը չսպասելով իմ խօսքի շարունակութեանը շէտը դրեց վրէժ բառի վրայ հարցնելով.

-Ի՞նչ վրէժի մասին ես խօսում, մըջիւնն ու վրէժ:

Դեռ Արամի կասկածամտութիւնը չփարատած սենեակից տեղափոխուեցինք բակը փոքրիկ աւազանի մօտ: Արեւն արդէն իսկ փէշերը հաւաքած հեռացել էր մոլորակի միւս կէսին բաշխելու իր լոյսն ու հուրը, իսկ մութը տարածել էր գորշ թեւերը, աստղեր էին ծիւղակում երկնքում, իսկ լուսինը նրանց լանջին իր մանգաղեայ տեսքով արծաթեայ աղօտ լոյսն էր արձակել դէպի երկրի մարդկանց, օղբ մասամբ զովացել էր եւ հաճելի էր բակում նստել: Փողոցի սիւնից արձակուող բարձրադիր լամպայի դեղնաթուր լոյսի շողքը փոռուել էր բակի գեղեցիկ եւ կլոր աւազանի վրայ, որի կենտրոնից շատուանի ջուրը դէպի երկինք էր խոյանում եւ թափով իջնում շամանդաղի նրբատիկներ սրսկելով շուրջը: Շատրուարանի բարձրանալն ու անկումը իմ մօտ արթնացրեց մտածում գոռոզ մարդու հոգեվիճակին առընչուող, որը աթոռի կամ հարստութեան հասնելով իրեն կորցնում է, գոռոզանում է, վերից է նայում շրջապատին՝ արհամարելով տկա-

Շաք.բ էջ 18

98th ANNIVERSARY COMMEMORATION ARMENIAN GENOCIDE
ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ
TURKEY IS GUILTY OF GENOCIDE • DENYING THE UNDENIABLE IS A CRIME

TIMES SQUARE
 43rd Street & Broadway
 New York City
Sunday, April 21, 2013
2:00-4:00 PM

Sponsored by the Knights & Daughters of Vartan
 Co-sponsored by AGBU, Armenian Assembly of America, Armenian National Committee of America, ADL-Ramgavars, and Armenian Council of America
 With the participation of the Diocese of the Armenian Church of America, Prelacy of the Armenian Church of America, Armenian Missionary Association of America, Armenian Catholic Eparchy for US and Canada, Mid-Atlantic ACYOA, AYF-YOARF, Armenian Youth Organizations, and University Armenian Clubs

FREE BUS TRANSPORTATION TO & FROM TIMES SQUARE

<p>New Jersey Churches Sts. Vartanantz Armenian Apostolic Church 461 Bergen Blvd., Ridgefield, NJ (201) 943-2950 St. Thomas Armenian Church Highway 9 & E. Clinton Ave., Tenafly, NJ (201) 567-5446 St. Leon Armenian Church 12-61 Saddle River Rd., Fair Lawn, NJ (201) 791-2852 Holy Cross Armenian Church 318 27th St., Union City, NJ (201) 864-2480 Armenian Presbyterian Church 140 Forest Ave., Paramus, NJ (201) 265-8585 Coordinators Andy (201) 368-2791 Kostan (201) 741-9789 Sona (551) 427-8763</p>	<p>New York Churches St. Sarkis Armenian Apostolic Church 38-65 234th St., Douglaston, NY (718) 224-2275 Armenian Church of the Holy Martyrs 209-15 Horace Harding Expwy., Oakland Gardens, NY (718) 225-0235 St. Vartan Cathedral 630 2nd Ave., New York, NY (212) 686-0710 Coordinators Eddy (917) 885-9729 John (718) 631-2247</p> <p>Brooklyn Chase Bank (@ Coney Island Ave.) 1002 Brighton Beach Ave., Brooklyn, NY Tigran (718) 891-8486 (347) 291-7765</p>
--	---

For more information about the commemoration, please visit <http://kofv.org> and click April 24 or <http://www.facebook.com/events/196650670480913>
 To learn more about the Armenian Genocide, please visit www.theforgotten.org, www.armenian-genocide.org, www.twentyvoices.com

«ԱՐԱՐԱՏ 73»-40 ՏԱՐԻ ԱՆՑ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ յուշերը

ԵՐԵՎԱՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Որքան մանրամասնում ենք «Արարատ 73»-ի յաղթանակները, այդքան բացայայտում ենք նոր ու հաճելի փաստեր եւ իրադարձություններ, որոնց մասին այսօրուայ ֆուտպոլասէրը չգիտի:

«Արմենպրես»-ը շարունակում է տարիների հեռուից ներկայացնել «Արարատ 73»-ի երբեք չմարող, սերունդներին միշտ հպարտութիւն պարգեւող այդ յաղթանակների նոր մանրամասնները: Դրանք «երէկուայ թարմութեամբ» պատմում են եւ հերոսները եւ այդ օրը տօն դարձրած ակնատեսները:

Պատմում է Արմէն Սարգսեանը:

Ծնուել է 1953 թուականին: Պաշտպան: Սպորտի վարպետ: ԽՍՀՄ ֆուտպոլի «Ա» խմբի առաջնութեան բարձրագոյն լիգայում հանդէս է եկել Երեւանի «Արարատ»-ի կազմում 1972 թուականին: 1973թ. երկրի գաւաթակիր եւ ԽՍՀՄ առաջնութեան ոսկէ մետալակիր: 1973 թուականին նուաճել է «Սմենա» ամսագրի լաւագոյն դեմոստրանտի մրցանակը: Հանդէս է եկել ԽՍՀՄ ազգային հաւաքականում: Պարգեւատրուել է ՀՍՍՀ Գերագոյն պատուազրով: Մասնակցել է 25 խաղի:

-Ինչպէս եկաք «Արարատ»:
-Ես խաղում էի Հայաստանի երիտասարդական հաւաքականում: Այն ժամանակ ԽՍՀՄ-ում անցկացւում էին սպարտակիտականներ, դա էլ մեր օլիմպիական խաղերն էին: 1971-ին մեր երիտասարդականը դարձաւ ԽՍՀՄ սպարտակիտայի ախոյեան: «Արարատ»-ի գլխավոր մարզիչ Նիկոլայ Գլեբովը մեր թիմից մի քանի հոգու ընդգրկեց «Արարատ»-ի փոխարինողների կազմում: 6 հանդիպումներում փոխարինող եմ եղել: 1972-ին արդէն հիմնական կազմում էի:

-Դուք «Արարատ»-ի հիմնական կազմում էիք, երբ Նիկիտա Սիմոնեանը ստանձնեց թիմի գլխավոր մարզչի պաշտօնը: Որքանով ազդեց նրա ներկայութիւնն ու վարպետութիւնը թիմի վրայ:

-Մինչեւ Նիկիտա Սիմոնեանի գալը մենք արդէն կուռ կայացած թիմ ունէինք: Նա բնաւորութեամբ կիրթ եւ հանդարտ մարդ է: Նիկիտա Պավլովիչը ԽՍՀՄ տարբեր թիմերում էր խաղացել, բազմակի ախոյեանի տիտղոս ունէր: Նրա հետ հաղորդակցուելը եւ հետաքրքիր, եւ ուսանելի էր, եւ ոչ միայն ֆուտպոլում: Բացի մարզական վարպետութիւնից, նա մեզ տուեց ամենակարեւորը՝ հաւատը սեփական ուժերի նկատմամբ: Մեզ համար տեսանելի դարձրեց այն նպատակը, որի համար դաշտ էինք մտնում. դա յաղթելն էր: Նա մեր թիմային խաղն ամրացրեց:

Մոսկովեան հանդիպումների ժամանակ, երբ հանդերձարան էին գալիս Մոսկուայի նրա հայ ընկերները՝ էդմոնդ Քէօսէեանը, Արմէն Զիգարիսեանը, միւսները, մեզ աւելի ուժ ու հպարտութիւն էին պարգեւում: Երկար ժամանակ մենք Մոսկուայում պարտութիւն չկրեցինք: Նոյնիսկ «Ազրեսիւ հիւր» մրցանակ ենք ստացել:

Մեր խաղը համեմատում էին բրազիլացիների խաղի հետ: Երբ դաշտ էինք մտնում, ասում էին բրազիլացիներն են խաղում: Սա ինքնագովեստ չէ, նոյնիսկ ժամանակի մամուլն էր այդպիսի վերնագրերով նիւթեր տպում:

-Եկաւ 1973 թուականը, որը դարձաւ հայկական ֆուտպոլի ոսկետառ էջը: Ինչպէս էք յիշում այսօր այդ թուականը:

-Անկեղծ ասած, գաւաթի խաղից յետոյ անձամբ ես դեռ չէի




հասկանում, թէ ինչ է կատարում: Խաղաւարտից ըստէնք առաջ, երբ շատ ֆուտպոլասէրներ արդէն հեռանում էին ստադիոմից, յանկարծ այդ հարիւր հազարանոց «Լուծնիկի»-ը որոտաց ուրախութիւնից: Իշտոյեանի խփած գոլը նրանց յետ բերեց: Նրանք, իհարկէ, խփած գոլը չտեսան, բայց մեր յաղթանակը տեսան: Մենք 1975-ին էլ ԽՍՀՄ գաւաթը նուաճեցինք, բայց ուրիշ էր 1973-ը:

Մենք ուրախ էինք, որ յաղթել ենք: Բայց յետոյ, երբ վերադարձանք Երեւան, նոր միայն հասկացանք, թէ ինչ ենք արել, եւ ինչ էր այդ յաղթանակը: Ազգովի էինք յաղթել եւ ազգովի էլ տօնում էինք: Թիմից աւելի ուրախ ու հպարտ էր մեր ժողովուրդը:

-Դուք «Արարատ»-ում պաշտպանի թիւ 3 մարզաշապիկն էք կրել: Երբ պարտում է թիմը, ասում են պաշտպանութիւնն էր թոյլ: Դուք դրանից չէիք վերաւորում:

-Դարպասապահը դարպասն է պահում, պաշտպաններն էլ՝ նրան:



Բայց դարպասը պահելու այսպէս ասած «հոգ»-ը ամբողջ թիմինն էր, յաղթանակն էլ՝ բոլորինը: Վիրաւորուելու հարկ չկայ. ե՛ւ յաղթանակը, ե՛ւ պարտութիւնը մէկինն է, եւ այդ մէկը թիմն է: Այո, պաշտպանը պէտք է այնպէս անի, որ խափանի հակառակորդի գրոհները, այսպէս ասած՝ վնասագերծի դարպասին մօտեցող մրցակցին:

-Ասում են՝ «Արարատ»-«Բաւարիա» խաղից յետոյ Գերտ Միւլլերը «գանգատուել է» ձեզանից:

-Խաղը Երեւանում էր: «Բաւարիա»-ն այդ տարի բազմաթիւ տիտղոսներ էր նուաճել, իսկ Միւլլերը, ով եղել էր աշխարհի եւ Եւրոպայի ախոյեան, արժանացել

հանգներում մարզում էք երկու տարի քային խմբի ֆուտպոլիստների: Սովորեցնում էք եւրոպական ֆուտպոլ: Ամերիկեան ֆուտպոլն այլ է. այդտեղ եւրոպական ֆուտպոլը տարածում չունի, եւ կարծես թէ չեն սիրում:

-Ոչ, այդպէս չէ: Նախ Յուրա Մովսիսեանը ԱՄՆ-ից է եկել: Յետոյ գիտէք, որ քան ես նկատել եմ, այստեղ կայ ֆուտպոլասէրներ ու հանդիսատես կորցնելու վախը: Այդ դրանք էլ խանգարում են Նահանգներում եւրոֆուտպոլի տարածմանը: Ամբողջ Հարաւային Ամերիկան՝ Պրագիլիա, Արժենթինա եւ այլն, եւրոպական ֆուտպոլով հիացնում է աշխարհին: Իսկ, ինչպէս



Գերտ Միւլլեր եւ Արմէն Սարգսեան


էր «Ոսկէ գնդակ»-ի, երբեք դաշտից չէր հեռացել առանց գոլ խփելու: «Հրազդան» մարզադաշտում չկարողացաւ: «Մովետսկի սպորտ» թերթին տուած իր մի մեծ հարցազրոյցում «մեղքը» գցել էր ինձ վրայ: Այդ հանդիպման ժամանակ ինձ յաջողում էր խափանել ու կասեցնել նրա գրոհները:

-Այսօր Դուք Միացեալ Նա-


գիտէք, ֆուտպոլիստին գեղեցիկ խաղ եւ յաղթանակ «պարտադրում» է հանդիսատեսը, նա է առաջինը գնահատում մեր խաղը: Բացի դրանից, նա նաեւ տոմսերն իրացնողն է, որն այսօր դարձել է խաղերի համար գերիւնդիր:

Արմէն Սարգսեանի յուշերը երախտագիտութեամբ գրի առաւ Վարվառա Հայրապետեանը

833 W. Glendale Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծածառակներու և մտուկներու Քայրափառքից բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային և մկանային ցաւեր:
Բնորոշարթի վնասի նկատմամբ պատասխան
վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

OFFICE SPACE FOR RENT

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով Յետաքրքրուողներէն
հեռաձայնել՝ (626) 398-0506

ՀԱՃՆՈՅ ԳԻՐՔՈՎ ՀԱՐՍՏԱՑԱՆ

Շաբաթական Էջ 8-Էն

ապրելին, մեր պապենական հողերուն վրայ: «Միշտ պիտի մնանք Արարատի կողքին, Հայաստանի կողքին», եզրափակեց Դոկտ. Տափառյան:

Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկի տնօրէն Դոկտ. Հայկ Դեմոյեան նշեց, որ Եղեռնի դրուագներու կողքին յաճախ մոռացութեան ենթարկուած են հերոսամարտերը, որոնցմէ մէկն է Հաճնոյ հերոսամարտը: «Այս գիրքը եւ Հաճնոյ հերոսամարտը օրինակ պիտի ըլլան մեր գաւակներուն: Պահպանողականութիւնը մեզի կը տանի արմատներուն: Մենք ունինք յատուկ առաքելութիւն. մենք պիտի ըլլանք ա՛յն մուկը, որմէ կը սարսափի թրքական փիղը: Չափն ու դաշնակիցները վախ չեն կրնար սիրել: Հաճընը դրուագ մըն է, ուղերձ մը, որ մեզի

կը խրատէ չվստահիլ այլ ուժերու վրայ, այլ մաքառումի ոգիով եւ պայքարի աննկուն կամքով պաշտպանել մենք զմեզ», ըսաւ Դեմոյեան:

Գիտաժողովի իրականացման մէջ իրենց դերակատարութեան համար, յատուկ յուշատախտակներով պարգեւատրուեցան խումբ մը հայրենակիցներ եւ հայորդիներ: Զեռնարկի ընթացքին, Ուիլիամ Սարոյեանի «Հայ Մուկը» կտորը ասմունքեց Յաւերժ Շիւքրտըմեանը, իսկ «Զարթի՛ր Որդեակ» երգը ներկայացուց հաճընցի Աղազարեան ընտանիքի գաւակ՝ Լուսիա Քէշիշեանը:

Միջոցառումի աւարտին ներկաները միասնաբար հատեցին կարկանդակը: Մեկենասին փափաքով, Հաճնոյ Հայրենակցական Միութեան հրատարակած գիրքը անվճար բաժնուեցաւ ներկաներուն՝ հաճընցի հայրենակիցներուն եւ հիւրերուն:

ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Շաբաթական Էջ 8-Էն

պումներ, ներկայացուցան գեկոյցներ, Հայաստանի եւ գաղութներու ծրագիրներուն մասին: Համաժողովի մէկ գլխաւոր հատուածը յատկացուած էր Յեղասպանութեան իրաւական թղթածրարին, միջազգային օրէնքի հիման վրայ փոխ հատուցումներ պահանջելու հրամայականին, Սփիւռքի կարողու-

թիւններուն եւ գործակցութեան կարելիութիւններուն մասին: Զեկոյցով հանդէս եկաւ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան անդամ ընկ. տոքթ. Եղիկ Ճէրէճեան:

Եզրափակիչ նիստի ընթացքին փակման խօսքերով հանդէս եկան Վեր. Սողոմոն Քիլաղպեանը, Գէորգ Թ.Մ.Վրդ. Եղիայեանը եւ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեանը:

ԽՈՐԵՆ ԱՐԱՍՈՒՆԻ «ՊԱՏԱՆԴԸ»

Շաբաթական Էջ 14-Էն

մը եւս կը պոռթկայ ժողովուրդի անմխիթար վիճակին առթիւ, հեռաձայնով կ'անպատուէ վարչապետն ու կը մեղադրէ Հայաստանի Հանրապետութեան առաջին, երկրորդ ու երրորդ վարչութիւնները, «Դո՛ւրս ելէ՛ք եւ տեսէ՛ք ժողովուրդի առօրեայ անյոյս ու անհեռանկար կեանքը...ինչպէ՞ս կողոպտեցիք ժողովուրդի ստեղծածը, ծածկեցիք Ազգային ժողովի հոկտեմբերեան սպանդը, իսկ հը մէկ միլիոնը, որ լքեց ու գնաց իր հայրենի տունէն...» եւ նման խօսքեր շարունակելով իշխանաւորներու հասցէին:

Տրաման կ'աւարտի այն պահուն, երբ Գայիանէ կը յաջողի լքուած ատրճանակը ձեռք ձգել եւ ուղղել իր սիրեցեալ Արամի վրայ, երբ Արամ կը փորձէր մատաղ ընել բժշկուհին: Ներսիս կը խուժէ Ղազար Արամ հլու հնազանդ կը յանձնուի ձեռնակապերուն:

Ցնցող հնարանք մը մտածած է Արամունի, որպէսզի Արամի տարօրինակ ու խելագար միջոցով պատկան մարմիններուն ցոյց տայ մեր հայրենի ժողովուրդին անտեսումը եւ արժանանապատուութեան գետնահարումը: Ոմանք կրնան չհամաձայնիլ հեղինակի ընտրանքին հետ, բայց այսօրուան կացութիւնը լաւագոյնս արտայայտելու գեղարուեստական հնարանք մըն է: Ես, յամենայն դէպս, ուշի ուշով կը հետեւէի հանդիսատեսներուն տրամադրութեանց ու հոգեկան ելեւէջներուն եւ կը նկատէի անոնց լուռ համաձայնութիւնը Արամի պոռթկուածներուն հանդէպ: Արամ կը խօսէր բոլորիս կողմէ եւ բոլորիս փոխարէն:

Յիսուն-վաթսուն հանդիսա-

տես միայն տեղաւորող T. U. Studio-ն իր պարզ ու անպաճոյճ բեմով ամբողջ ժամ մը մեզ կախուած պահեց չորս դերասաններու բերանէն: Պարզապէս գերազանց էին Մէրիի եւ Արամի խաղարկութիւնը: Անոնք ամբողջութեամբ մտած էին իրենց դերին մէջ՝ ցոյց տալով արհեստավարժ դերասանէն ակնկալուած բոլոր շնորհքները՝ ձայնային ելեւէջ, մարմնական շարժումներ, բեմի ամբողջական օգտագործում, իսկ Արամ ուղղակի բացառիկ էր իր երգիծական վրձնահարուածներով տրաման աւելի ընկալելի դարձնելու մէջ: Արշալոյսը հեղինակաւոր ներկայութիւն մըն էր բեմի վրայ, ամբողջութեամբ համոզիչ, թելադրող եւ ճիշդ առօրեայ լեզուութեամբ շնորհագարուած: Զարեհ ըրաւ իր կարելին ցոյց տալու համար թէ՛ ոստիկանը եւ թէ՛ Արամի սրտակից ընկերը միտամանակ:

Ի հարկէ այս բոլոր արժանիքները ի մի բերելը եւ անոնցմէ առաւելագոյնը ստանալը կը պարտինք արհեստավարժ ու բազմաթիւ բեմադրութիւններու հեղինակ բեմադրիչ Արամագը Ստեփանեանին, որ, ի դէպ, Խորէն Արամունիի երկրորդ թատրերգութիւնն է, որ կը ներկայացնէ:

Խորէն Արամունի Քէշիշեան վաւերական գրող մըն է անկասկած: Անոր գրիչն ու տխուր երգիծանքը երթալով յղկուեցաւ անցնող տարիներու ընթացքին: Ան միտամանակ քաջ է ու համարձակ, իր գրիչը ձողկող է եւ ընտրուած թիրախը (թիրախները) ճիշդ անձերուն ուղղուած:

Ով ակնաջ ունի թող լսէ, ով աչք ունի թող տեսնէ, այն ինչ որ Խորէն կը յաջողի կատարել իր յանդուգն գրիչին միջոցով:

ՀԱԼԵՊԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՆՉԸ

Շաբաթական Էջ 13-Էն

դար վայելքէն զրկուած, շշմած, քարացած հալէպցի հայր: Մղձաւանջային օրեր ապրող հալէպցի հայր...

Հիմա բնիկ արաբ տեղացիին նման ինք եւս ահաբեկ գարթումի մէջ է՛: Երազային ապրած իր կեանքը Միջին Արեւելքի հիւրընկալ փիերուն... Երա՞զ էր ուրեմն: Հեռատես չեղա՛ւ Հալէպցի հայր: Եղաւ երախտագէտ գինք գրկող արաբին ու զրկուած հայրենի հողէն որդեգրեց այն հողը, որ ապաստան տուաւ իրեն եւ իր երազներու գեղեցիկ դղեակը կառուցեց Հալէպի պատմական բերդի հովանիին ներքոյ, ամուր խարխիւի վրայ կարծեց հիմնել իր եւ իր գաւակներուն կեանքի կուռանը...

Խաբկանք էր ուրեմն երջանկութեան իր երազը...

Հիմա ձեռնունայն ու կործանարար աղէտէն սարսափահար, համակուլ պատուհասէն խուճապահար, իր դէմ կը գտնէ բոլորովին այլ ինքնակորոյս սուրիացի արաբ մը:

1915-ի ցեղասպանութենէն ետք հայրենի հողէն արմատախիլ եղած հայ ազգը հարիւր ամեակի սեմին արմատախիլ է այժմ իր ծննդավայրէն ալ...կարծեցեալ իր երկրորդ հայրենիքէն ալ: Ուր է երկ-

նից խոստացեալ արդարութիւնը հայուն: Կորսուած հաւատքն ու յոյսը հայուն: Արդարութեան պահանջը-կանչը հալէպահայուն:

Հալէպահայութեան կանչը մեր չորրորդ սերունդի հայ պատանիի արդարութեան կանչն է նաեւ:

Ո՛ւր փնտռեմ քեզ արդարութիւն, անտառի խորէ՛րը, թէ՛ խորը ամեհի ծովուն. Ու՛ր ես դուն... Անարդարութիւնը սանձարձակ Փոթորիկ կը յարուցանէ. Դէս ու դէն կը հարուածէ արդարութեան անունով անարդարութիւն կ'ընէ: Անարդարութեան նժարը ծանր կը կշռէ անմեղին արցունքը յորդառատ անձրեւի պէս կը հոսի. առանց քեզի վայի ձոր է երկրագունդը... Արդարը, յուսահատ կ'աղօթէ. մարդկութիւնը բազկատարած քեզ կը կանչէ: Ո՛ւր ես դուն մարդկային խիղճի՞ն մէջ ես արդեօք, թէ՛՛ այլուր: Մարդիկ անդադար անունդ կը հոլովեն արդարութիւնը հագուագիւտ է, թանկագին է, կ'ըսեն. Քու անունովդ երդում կ'ընեն՝ մենք արդար ենք, կը յոխորտան ու անարդարութեան մէջ կը լողան... Մարդկային խիղճն ալ թափուր է, հոն ա՛լ չկաւ դուն: Ի՞նչ ընեմ ես... ո՛ւր փնտռեմ քեզ, ո՛ւր է ձամբան, որ կը տանի Հաւատքի ճշմարտութեան Մարդկային Արդարութեան: Ի՞նչ ընեմ ես. այս աշխարհի մեղքը. հիմա...ինչպէ՞ս քաւեմ ես:

ՊԱՅ ՍԸ ՊԵՊՕ ՍԻՄՈՆԵԱՆԻՆ ՅԵՏ

Շաբաթական Էջ 14-Էն

Ծեռնակաբերդ երթին ոչ միայն հայրենի ժողովուրդէն, այլ նաեւ սփիւռքէն Հայրենիք մեկնող հազարներու, որոնք կը բարձրանան Ծիծեռնակաբերդ խոնարհելու համար մեր նահատակներու յիշատակին առջեւ:

Ողջ սփիւռքի հայեացքը ուղղուեցաւ Ծիծեռնակաբերդ: Ուրախաբեր թեմաքի վերածուեցաւ նաեւ այն իրողութիւնը, որ արտասահմանէն բազմաթիւ քաղաքական դէմքեր ու մշակութային շարժումներու առաջնորդներ այցելելով Հայաստան կը բարձրանան Ծիծեռնակաբերդ ու կը խոնարհին մեր խորագոյն ցաւը արտայայտող նահատակաց յուշարձանին առջեւ, մտովին փոխադրուելով դէպի Տէր Զօր...:

Եւ քանի որ այս օրերուն նախասեմին ենք Մեծ Եղեռնի 100 ամեակին, մեր ամբողջ ժողովուրդին կը մնայ տէր կանգնիլ մեր պահանջներուն, որուն նպատակը ցեղասպանութիւնը ընդունիլ տալը չէ միայն, այլ հատուցումը մեր հողային ու մարդկային, տնտեսական ու մշակութային կորուստներուն: Այս հարցին կապակցութեամբ մեր մէջ յոռետեսներ չեն պակսիր, բայց մենք կը խորհինք թէ՛ մեր պահանջները արդարացի ըլլալով, միջազգային օրէնքները պիտի չկարենան խուսափիլ արդարութենէն:

Կրնան հայկական դատի հարցը յետաձգել, բայց ուշ կամ կանուխ մեր երազները պիտի իրականան:

Ո՞վ կրնար երեւակայել, որ Խորհրդային Միութեան պէս հսկայ տէրութիւն մը կրնար փուլ գալ: Պատահեցաւ անկարելին: Մեր դատին համար եւս կրնայ իրականանալ Անկարելին: Հայ դատական հարցի լուծման ուղղութեամբ հայրենիք եւ սփիւռք միահամուռ գործակցութեամբ կրնան յամեցող արդարութեան ընթացքը արագացնել, կրնա՞ն:

Սփիւռքի հայութիւնը պէտք է հոգեպէս ու ֆիզիքապէս պատրաստ ըլլայ այդ օրուան համար: Պատրաստ, մեկնելու հայրենիք ու վերածաղկեցնելու այն հողերը որոնք հայ ձեռքերու կարօտով կ'ապրին:

Կարելի չէ մոռնալ դէպք մը, երբ մեր Երեւան այցելութեան առիթով գտնուելով Քրուպաքայի անուան դպրոցին մէջ, հաստատութեան տնօրէնուհին ըսաւ. - Ամէն տարի Ապրիլ 24-ին աշակերտներս կը տանիմ Ծիծեռնակաբերդ, ուր անոնք խմբովին կը վերանորոգեն իրենց ուխտը: Այս օրինակով լիբանանահայ բոլոր դպրոցներու աշակերտները բարձրանալով Պիքֆայայի Հայոց Եղեռնի յուշարձանին շուրջ պէտք է վերանորոգեն իրենց ուխտը:

Նոր սերունդը ուժ է: Նոր սերունդը պարտի շարունակել իր պայքարը յանուն մեր պահանջատիրութեան: Կը հաւատանք նոր սերունդին:

Բարեկամս, ուսուցիչ ու գրող Պէպօ Միմոնեան, ոգեշնչած կը շարունակէր խօսիլ, նիւթը անսպառ էր: Մենք շնորհակալութիւն յայտնեցինք իրեն ու մեկնեցանք:



Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianrelieffund.org

ՄՐՋԻՒՆՆԵՐԻ ԽԱՅԹՈՑ

Շարունակուած էջ 15-էն

րին, անգիտանալով որ վերելքը վաչրէջք էլ ունի: Երբ տեղաւորուեցինք արթունքի վրայ, Արամն իմ դիմացը նստեց, լամբայի լոյսը դիպչել էր դէմքին, պարզօրէն նկատուած էր նրա թիկնեղ ուսերը, դէմքը խոշոր ածխագոյն աչքերով եւ սեւաթուր խիտ մազերը խնամքով սանրած, մէջքին լայն ստուերն էր տարածուել, ի պատասխան նրա հարցադրումին թէ՛

-Ինչպէս տեղեակ ես, այս բակը սկզբում պատած էր ինքնաբոյս խոտի ծղոտներով, դեղին ու երկար մրջիլներով բոյն յայտնուեց, ես հիմնուած այն բարոյախօսական պարսիկ բանաստեղծ Սասուի այլաբանական խօսքի վրայ, թէ՛ «Մի՛ նեղացնի հատիկ քարը տող մրջիլներին, քանի որ նա եւս շունչ եւ ոգի ունի, որի համար կեանքը քաղցր է ու հաճելի», թողեցի շարունակին իրենց կեանքը խղճալով նրանց:

Արամը խօսքս ընդհատելով ասաց.

-Մեր գիւղական կեանքում տարեց մարդկանց մօտ առաքինի անհատների մասին խօսելիս ասում էին՝ մրջիլների վրայ ոտ դրած չունի, այդպէս որ երեւում է, դու էլ այդ բարեխիղճ հոգեբանութեան տէրն ես, ներողութիւն խօսքիդ մէջ ընկնելուս համար, դե՛հ շարունակիր:

-Արդարեւ՝ հիմնում էի նրանց աշխատասիրութեան վրայ, թէ ինչպէս շղթայակերպ եւ արագընթաց իրենց սնունդի եւ պահեստի համար ցայգալոյսից սկսեալ աշխատանքի են լծուած իրենցից խոշոր ցօղունի կտորտանքներ եւ հատիկներ տեղափոխելով կեանքի գոյութեան սպահովութեան համար: Մրջիլները իրենց դիմադրողական աննկուն կամքով ու արագքով ընդունուած են որպէս հետեւողական աշխատանքի ու աշխատասիրութեան խորհրդանիշ:

Արամը դարձեալ ներողամտութեամբ ընդմիջեց ասելով.

-Այն ինչ ասացիր մրջիլներների մասին բոլորը ճիշտ, բայց նրանց թոյլ տալ, որ ազատօրէն բազմանան, սխալ ես արել, մրջիլների տեղը անտառումն է՝ դաշտում կամ անապատում, բայց ոչ թէ մարդու բնակավայրում:

-Մի բերլի բարեկամ, այս վայրերը, ուր մենք բնակութիւն ենք հաստատել, նախապէս դաշտեր ու անապատներ են եղել, որոնք նրանց բնակավայրերն են, սակայն նրանք սիրտ չեն կտրում իրենց հարազատ միջավայրից անջատուելու, նրանք կառչած են իրենց բնօրրանից, որը քաղցր է ու անմոռանալի, մարդկանց նման չեն, որ դժուարութեան հանդիպելով թողնեն եւ հեռանան իրենց հայրենիքից: Նրանովհանդերձ որ տարբեր միջոցներով մրջիլներն գոյութեանը վերջ է տրուած, սակայն մնացորդները պայքարելով շարունակում են իրենց կեանքը բազմանալով:

-Դա անժխտելի իրականութիւն է, բայց ինչ պէտք է արած, նրանց հետ պէտք է ապրե՞լ, որ շարունակ մեր նեղութեան ու հիւանդութեան պատճառ դառնա՞ն, չէ՛, այդպէս չի կարելի, ինչպէս չի կարելի հայատեաց թուրքի հետ մի տեղում ապրել: Թող մեր անցեալի պատմութիւնից մի դրուագ պատմե՛մ Արցախին կապող, 18-րդ դարի առաջին կիսամեակում, Արցախի մելիքներից մէկը զօրավիգ կանգնելով թուրք քոչւոր փանախանին, քաղաքական հաշիւներից

թելադրուած, նրան հրաւիրեց Արցախ, նա իր տոհմով ու ցեղով եկաւ եւ հաստատուեց Շուշիում, նրանք ցնկնելով շատացան, պատուհաս եւ փորձանք դարձան Արցախցիների համար, մինչեւ Արցախի հերոսական անկախացումը նրանց հեռացնել տուեց :

-Ոչ թէ միայն պատուհաս դարձան, այլ հայ մելիքների մէջ պառակտում եւ ազգամիջեան կոիւներ դրդեցին:

-Այո՛, այդպէս է, գալով մրջիլներին դու բարեհոգութեամբ ես վարուել նրանց հետ, բայց նրանք անգիտակ իրենց բնագոյով են ապրում: Ինչ է նշանակում վնասակար միջատին խղճալ, ինչպէս չի կարելի խղճալ մարդասպան թուրքին, տեսա՞ր եւ լսեցի՞ր, թէ ինչպէս Մեր այս ընթացիկ օրերին հայասպան Ռամիլ Սաֆարովին բանդից արտայանձնեցին, պարզեւզերեցին եւ հերոսացրին, քանի որ նա հայ էր սպանել, նահատակ Գուրգէն Մարգարեանին քնած տեղում կացինահար էր արել: Հիմա քոնն է եղել, ո՛չ, այսպիսի մարդասպան թուրքերին չպիտի խղճալ եւ ոչ էլ՝ վնասակար միջատին կամ կենդանուն:

-Անվարան համաձայն եմ քո տեսակէտների հետ, սակայն թոյլ տուր, որ ասեմ, մենք հայերս խղճմտանքով ժողովուրդ ենք, կարեւորութիւն ենք տալիս հոգեկան արժէքներին, ազգայինից վեր դասելով բարոյական եւ մարդասիրական արժէքները: Այս բոլոր տանջանքները, տառապանքները եւ կոտորածները մեր հայերիս նկատմամբ կատարուելով հանդերձ ու գում ենք թուրքերի հետ բարի դրացիական յարաբերութիւններ ունենալ, ապրել խաղաղ եւ իրար օգտակար, սակայն նրանք հայի ապրելը չեն ուզում տեսնել: Լաւ նկատել ես, թէ ինչպիսի վերաբերմունք ունեն, արդէն 20 տարի է Հայաստանն ու Արցախը շրջափակման են ենթարկել՝ ահաւոր կորուստների եւ վնասների պատճառ դառնալով: Նպատակ ունեն Հայաստանը տնտեսական ճգնաժամի ենթարկել, հայերին թուլացնել, մարդուժից եւ կուռղ բազուկից զրկել, գաղթեցնել եւ դադարկել երկիրը: Երկրում որ աշխատանք չլինի, մարդիկ իրենց գոյապրուստի համար պէտք է ելք փնտրեն, այս պատճառով մեծ թուով հայեր են արտագաղթել:

-Թոյլ տուր հոգեկան եւ մարդասիրական արժէքների կապակցութեամբ ասեմ որ՝ իւրաքանչիւր քաղաքակիրթ-կուլտուրական մարդ, լինի հայ կամ օտար, այդպիսի հոգեբանութեամբ է ապրում, բայց ինձ համար անընդունելի է ազգի շահերը շրջանցել, ո՛չ, հաւատացած եմ՝ ով սիրում է իր ազգը, նաեւ յարգում է ուրիշին: Ահա՛ մեր ազգի շահերը նկատի չառնելով է, որ այս օրին ենք մատնուած, դարձել ենք օտարամուտ, շարունակ օտարինը գերազանհատելով եւ գերադասելով, այս պատճառով էլ միշտ տուժել ենք եւ շահագործուել: Արցախեան գոյամարտը նոր ուղի բացեց հայութեան առջեւ ակն ընդ ական քաղաքականութիւն որդեգրելով, հայրենասիրութեան եւ ազգասիրութեան նոր շունչ ու ոգի բերեց, անհրաժեշտ է այդ ոգին արթուն պահել սերունդների կեանքում:

-Գալով մրջիլներին ասեմ որ անցիկների կողմից ահազանգեր հնչեցին, թէ՛ նրանք երեխեքին կծում են եւ ցաւերի պատճառ

դառնում, նոյնիսկ բակը բարեկարգելու ընթացքում ինձ անգամներ խայթեցին, անպայման լսել ես այս առածը, որ ասում է՝ տե՛ս, կարմիր պղպեղը (բիբար) փոքր է, բայց ուտելիս ինչ է կսկծացնում եւ արցունք է բերում աչքերին : Էլ համբերելը անհնարին էր, նրանք ամէն տեղ տարածուել էին, բողբոջի եւ անհանգստութեան ալիքներ էին բարձրանում նրանց դէմ, ուստի տարբեր միջոցներով պայքար գնաց նրանց դէմ, մօտաւորապէս բակը մաքրուեց նրանցից, սակայն մէկ մասը գլուխ հանեց շէնքի ետեւի մասում, ուր եւս նրանց մաքրագործելու աշխատանքներ են տարուում, բայց նրանց դէմ մեր հալածանքները անպատասխան չէին մնում, որեւէ մի առիթով այդ իրենց պոստիկ տեղով իբր թէ իրենց ընկերների վրէժն էին լուծում, որն եղաւ իմ ոտքիս պարագան, բժշկի դիմեցի, հարկ եղած դեղեր սրսկուեց, բժիշկը առաջարկեց սողա օգտագործել վերջ տալու մրջիլներին:

-Դեհ, վրէժխնդրութիւն քիչ թէ շատ բոլոր արարածների մօտ առկայ է նկատի առնելով նրանց կարողականութիւնը թէ՛ ուժի եւ թէ՛ բանականութեան: Օձերի պարզային վրէժխնդրութեան պարագաներ շատ են նկատուել, վայ թէ գոյգ օձերի ներկայութեամբ նրանցից մէկնումէկը սպանուի եւ միւսը փախուստ տայ, նա սպանողի կերպարանքը պահում է իր յուշապատկերում առիթ փնտրելով գոյգի վրէժը լուծելու համար: Նրանովհանդերձ ես վրիժառութեան հետ

այնքան էլ համաձայն չեմ, որովհետեւ դա յաջողութեան հասնելու ելք չի, կոյր գործողութիւն է:

-Ես էլ քո հետ համաձայն եմ, թշնամանքը խորացնում է, սակայն կան այնպիսի պարագաներ, որոնք անխուսափելիօրէն ստիպում են մարդուս վրէժխնդրութեան դիմել, ինչպէս հայերիս ցեղասպանութեան պարագային դահիճները յաչս աշխարհի ազատ վայելում էին իրենց արիւնուռչտ կեանքը: Պէտք էր որ նրանց վերջ տալ, ի լուր թուրքին հասկացնել, որ խաղաղ ու շինարար ժողովրդի դէմ ջարդն ու կոտորածը անպատասխան չի մնում, ինչպէս էլ արեցին մեր նեմեզիսները թալէթներին շանսատակ անելով իրենց հայրենիքից հեռու ծապտուած օտար երկրներում:

-Դա ոչ թէ վրէժխնդրութիւն էր, այլ բողբոջ, ճիչ ու ցատու նահատակ ընտանիքների մագապուրծ ողջ մնացած զաւակների ընդդէմ ժամանակների գերմեծ պետութիւնների, որոնք իրենց խուլ ձեւացրեցին թոյլ տալով ամբողջ մի ազգի կէսը ջարդուի եւ կոտորածի ենթարկուի եւ հայրենի երկիրը բռնազրաւուի:

-Անմոռանալի եւ ահաւոր կտտացող ցաւ է սերունդների մօտ, եթէ չգործադրուի արդարութիւնը եւ չվերականգնի հայ ժողովրդի իրաւունքները: Ողբերգութիւնը մեծ է... բայց ոչ մի յուսալքում, անսակարգ պահանջատիրութեան ճամբին յաջողութիւնը մերն է լինելու անկասկած միահամուռ մէկ ճակատ դարձած:

ԱՊԱՔԻՄԱՆ ՄԱՂԱՆՔ
Մեր պաշտօնակից The Armenian Observer թերթի արտօնատէր եւ խմբագիր փրոֆ. Օշին Քէշիշեան, անցնող շաբթուան ընթացքին, անհագատանալով քանի մը օր հիւանդանոց փոխադրուած է բուժման համար: Ներկայիս կը բոլորէ ապաքինման շրջանը:
Շուտափոյթ, արագ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք հանրածանօթ լրագրողին:


ԳՐԱԽՈՒԱԾ ՕՐ
Մայիս 10, 2013
Բեմիալին ժամկոչեանի գիրքի ներկայացում
Սահակեան Սանուց Միութեան
կազմակերպութեամբ
Մանրամասնութիւնները յաջորդիւ:

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ

Vahe Atchabahian
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com

ՇՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ

Ամենախորին վշտով համակուած կը յայտենք մեր թանկագին եղբոր, հորեղբոր, մորեղբոր եւ հարազատին՝



ԴՈԿՏ. ՊՐՈՖԵՍՈՐ ՄԵՍՐՈՊ ԲԱԼԱՅԵԱՆԻ մահը, որն տեղի ունեցաւ Ապրիլ 3ին, Նոր Զուղայում:
Յուզարկաւորութիւնը եւ թաղումը կատարուեց Ապրիլ 8ին, Սպահանի Հայոց ազգային գերեզմանատանը:

Հանգուցեալի ցաւալի մահուան առթիւ, Կիրակի, Ապրիլ 14ին, կէսօրից յետոյ ժամի 1:30ին, Պրպանքի Հայոց Առաջնորդարանի Ս. Ղեւոնդեանց եկեղեցում-3325 North Glenoaks Boulevard, Burbank- կը կատարուի հոգեհանգիստ, որմէ ետք եկեղեցուն կից սրահում պիտի մատուցուի հոգեսուրճ:

Խնդրողներն են՝
Եղբայրը՝ Ներսէս Բալայեան-Տէր Մեսրոպեան (ընտանեօք):
Եղբայրը՝ Յովհաննէս Բալայեան (զաւակներով):
Քոյրը՝ Մարօ Սարգիսեան (զաւակներով):
Եւ համայն Բալայեան, Սարգսեան, Թաշճեան, Միքայէլեան, Քոջաբաբեան ընտանիքները, հարազատներն ու բարեկամները:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ՎԱՍԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԵՆՈՂԱՅՆԵԼ
(626) 797-7680

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ \$ 400
Long Weekend-ների համար՝ \$ 500
Մէկ շաբաթուայ համար՝ \$ 675
Մէկ ամսուայ համար՝ \$ 1450

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել «Կայծ» Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N.ALLEN AVE. PASADENA, CA 91104

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 100,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

INVITATION FOR BIDS

(IFB) No. 1735-A

THE RESTORATION AND PAINTING OF THE EXISTING WROUGHT IRON SECURITY DOORS AND WINDOW BARS

The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit firm fixed price bids for the restoration and painting of the existing wrought iron security doors and window bars, perimeter fencing, handrails and guardrails at the following public housing developments located at: Rancho San Pedro Housing Development, 275 W. 1st Street, San Pedro, CA 90731, Estrada Courts Housing Development, 3232 Estrada Street, Los Angeles, CA 90023, Pueblo Del Rio Housing Development, 1801 E. 53rd Street, Los Angeles, CA 90058, San Fernando Gardens Housing Development, 10995 Lehigh Ave., Pacoima, CA 91331. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org under "Doing Business with HACLA", then click on "Procurement Opportunities" and click "Construction Goods and Services". Bids will be accepted by the General Services Department at 2600 Wilshire Boulevard, 4th Floor, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., Pacific Daylight Saving Time, May 7, 2013.

4/4, 4/11/13 CNS-2463562# MASSIS WEEKLY

INVITATION FOR BIDS

(IFB) No. 1733-A

THE EXTERIOR PAINTING OF SEVENTY FOUR (74) BUILDINGS AT GONZAQUE VILLAGE HOUSING DEVELOPMENT

The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit firm fixed price bids for the exterior painting of seventy four (74) buildings at Gonzaque Village housing development. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org under "Doing Business with HACLA", then click on "Procurement Opportunities" and click "Construction Goods and Services". Bids will be accepted by the General Services Department at 2600 Wilshire Boulevard, 4th Floor, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., Pacific Daylight Saving Time, April 29, 2013.

4/4, 4/11/13
CNS-2461979#
MASSIS WEEKLY

INVITATION FOR BIDS

(IFB) No. 1734-A

THE RE-ROOFING OF SEVENTY FOUR (74) BUILDINGS AT GONZAQUE VILLAGE HOUSING DEVELOPMENT

The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit firm fixed price bids for the re-roofing of seventy four (74) buildings at Gonzaque Village housing development. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org under "Doing Business with HACLA", then click on "Procurement Opportunities" and click "Construction Goods and Services". Bids will be accepted by the General Services Department at 2600 Wilshire Boulevard, 4th Floor, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., Pacific Daylight Saving Time, April 29, 2013.

4/4, 4/11/13
CNS-2462011#
MASSIS WEEKLY

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք
«Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863

Massis2@earthlink.net



In commemoration of the
98th ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE
and organized by
Gaidz Youth Organization

ՀՍԿՈՒՄ/ՔԱՅԼԱՐՇԱԻ CANDLELIGHT VIGIL/WALK **March to Remember**

Tuesday, April 23, 2013
Երեքշաբթի, Ապրիլ 23, 2013

Walk from
Pasadena City Hall to
St. Gregory Armenian Church for
Requiem Service

- 6:00 PM Gather/Parking at Pasadena City Hall, 100 N. Garfield Avenue, Pasadena, CA 91101
- 7:00 PM Official walk (2.6 miles distance) begins
- 9:00 PM Requiem services (Hokehankisd) and program conclusion at St. Gregory Armenian Church, Pasadena
(Transportation back to the City Hall parking area at the conclusion of the event is provided by the organizers)

